Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային
շարժման հիմնարար սկզբունքները

Fundamental Principles of the Red Cross and
Red Crescent International Movement

**ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**
**HUMANITY**

**ԱՆԿՈՂՄՆԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ**
**IMARTIALITY**

**ՉԵԶՈՔՈՒԹՅՈՒՆ**
**NEUTRALITY**

**ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ**
**INDEPENDENCE**

**ԿԱՄԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ**
**VOLUNTARY SERVICE**

**ԵԶԱԿԻՈՒԹՅՈՒՆ**
**UNITY**

**ՀԱՄԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆ**
**UNIVERSALITY**





2016 թվականը Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) համար զարգացման և ձեռքբերումների տարի էր: Արդեն 96 տարի շարունակելով գործել բարդ միջավայրում և բախվելով բազմաբնույթ մարտահրավերների, ինչպիսիք են սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակը, տարածաշրջանային զինված բախումները, փախստականների ներհոսքը և այլն, Ազգային ընկերությունը մշտապես աշխատում է հզորացնել իր կարողությունները և ընդլայնել գործունեության շրջանակը:

Անցյալ տարվա ընթացքում ՀԿԽԸ-ն համակարգված գործունեություն է ծավալել կազմակերպության զարգացման և տեղական ռեսուրսների մոբիլիզացման ուղղություններով՝ մշակելով համապատասխան ռազմավարություններ: Մշակվել են նաև Կազմակերպության զարգացման 5-ամյա պլանով նախատեսված մի շարք ինստիտուցիոնալ փաստաթղթեր՝ քաղաքականություններ և ուղեցույցներ:

Խորացվել է համագործակցությունը ներկա գործընկերների հետ: Արդեն ավանդական դարձած տարեկան հանդիպումները Շարժման անդամների հետ հնարավորություն են տալիս առավել նպատակային ու ծրագրված դարձնել նրանց աջակցությունը ՀԿԽԸ հետագա զարգացմանը և գործունեությանը:

The 2016 was a year of vast development and achievements for Armenian Red Cross Society (ARCS). Have been operating years in complex environment and facing various challenges for 96, such as socio-economic hard conditions, regional armed conflicts, refugee influx, etc., the National Society constantly works on building its capacities and enlarging the spheres of activities.

During the last year, ARCS took serious steps towards developing in the Organizational Development and Local Resource Mobilization directions in a coordinated manner, developing relevant strategies. Number of institutional documents, policies and guidelines were created in the frames of 5 - year Organizational Development plan.

The cooperation has deepened with the current partners. Partnership Meetings taking place traditionally on annual basis with Movement members give an opportunity to make their support to ARCS further development and activities more targeted and planned.

The escalation of Karabakh conflict in April last year showed, that still there is much work to do, in order to respond and perform as a Movement. Thus, ARCS initiated Movement Contingency Planning process, and ICRC Delegation in Armenia, as well as International Federation of Red Cross and Partner National Societies joined the process

Անցյալ տարվա ապրիլին տեղի ունեցած Ղարաբաղյան հակամարտության սրացումը ցույց տվեց, որ անելիքներ կան՝ որպես մեկ Շարժում արձագանք իրականացնելու և ներկայանալու ուղղությամբ: Այդ կապակցությամբ, ՀԿԽԸ-ն հանդես եկավ Շարժման արձագանքման պլան մշակելու նախաձեռնությամբ, որին միացան և մեծապես աջակցեցին ինչպես ԿԽՄԿ հայաստանյան գրասենյակը, այնպես էլ Կարմիր խաչի միջազգային ֆեդերացիան և գործընկեր Ազգային ընկերությունները: Նոր թափով շարունակվեցին Առաջին օգնության դասընթացները հատկապես սահմանամերձ համայնքներում՝ հաշվի առնելով Առաջին օգնության գիտելիքների տարածման կարևորությունը:

Հանդիսանալով օժանդակ կառույց կառավարությանը՝ մարդասիրական ոլորտում, Հայկական Կարմիր խաչի ընկերությունը շարունակել է սերտ համագործակցությունը նաև պետական մարմինների հետ՝ հանդես գալով որպես հուսալի գործընկեր: Ազգային ընկերությունն առաջիններից մեկն է արձագանքել և մարդասիրական օգնություն տրամադրել Շիրակում և Գեղարքունիքում հունիսի 24-ին տեղի ունեցած սելավի հետևանքով տուժածներին՝ սննդի, հիգիենիկ փաթեթներ և դրամանական աջակցություն տրամադրելով 132 ընտանիքի:

Հատկապես բարձր են գնահատվել սիրիահայերին ուղղված գործունեությունն ու ծրագրերի արդյունավետությունը: 2016թ.-ին ՀԿԽԸ-ն դարձել է մի շարք հանձնախմբերի և ցանցերի անդամ, այդ թվում՝ Տարեցների պաշտպանության ցանցի և ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին կից խորհրդի: ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Լոռու և Շիրակի մարզպետարանների հետ կնքվել են Փոխըմբռնման հուշագրեր:

Անցած տարի ՀԿԽԸ-ն Շվեյցարական և Մոնակոյի Կարմիր խաչերի աջակցությամբ սկսել է նոր կարևոր ծրագիր՝ «Համայնքային ինտեգրացված տնային խնամք և առողջ ծերացում», որը ենթադրում է երկրում տարեցների սոցիալ-առողջապահական մասնագիտացված տնային խնամքի նոր մոդելի ներդրում:

Մեր բարեկամների ու աջակիցների վստահությունը և մարդասիրական արժեքներին նվիրվածությունը մեզ ուժ և կարողություն են տալիս՝ առաջ գնալու և զարգանալու, ընդգրկելու շահառուների նոր խմբերի, զուգահեռաբար բարելավելով ծառայությունների որակը և ռեսուրսներ փնտրելով՝ արձագանքելու շահառուների մարդասիրական կարիքներին:

Շնորհակալություն ենք հայտնում մեր բոլոր գործընկերներին, մեզ հետ համագործակցող կազմակերպություններին, անհատներին, բարերարներին ու կամավորներին՝ Հայկական Կարմիր խաչի ընկերության մարդասիրական առաքելության իրագործմանը աջակցելու համար:

and supported it. Taking into consideration the importance of First Aid skills dissemination, relevant trainings continued particularly in borderline communities.

As an auxiliary organization to the Government in humanitarian field, Armenian Red Cross Society continued the close cooperation with state authorities as well, as a trusted and reliable partner. The National Society was among the first, who responded and provided food and hygiene parcels and cash assistance to 132 families affected by mudflow of June 24 in Shirak and Gegharkunik Regions.

The efficiency of projects and activities towards meeting Syrian Armenians needs were highly appreciated by state authorities. In 2016, ARCS became a member of various groups and networks, including Elderly Protection Network and Council next to the RA Minister of Labour and Social Affairs. Memorandums of Understanding were signed with Lori and Shirak Regional Administrations.

Last year, ARCS launched a new important project "Integrated community-based home care service provision and healthy ageing", introducing in a country a new model of social-health specialized home care for elderly.

The trust and commitment to humanitarian values of our friends and supporters gave us strength and ability to go forwards and develop, involve new groups of beneficiaries, improving the quality of services and mobilizing resources to respond to the humanitarian needs of beneficiaries.

We thank our partners, organizations cooperating with us, individuals, donors and volunteers, for supporting the implementation of Humanitarian Mission of Armenian Red Cross Society.

Մխիթար Մնացականյան
Նախագահ
Mkhitar Mnatsakanyan
President

Աննա Եղիազարյան
Գլխավոր քարտուղար
Anna Yeghiazaryan
Secretary General



Հայկական Կարմիր Խաչի Ընկերությունը (ՀԿԽԸ) հիմնադրվել է 1920թ. մարտի 19-ին՝ Սպանդարատ Կամսարականի կողմից:

The Armenian Red Cross Society (ARCS) was founded on 19 March, 1920 by Spandarat Kamsarakan.

ՀԿԽԸ կայացման ուղին

Կարմիր Խաչն իր մարդասիրական առաքելությունը Հայաստանում սկսել է իրականացնել 1877թ., երբ Ֆիննական Կարմիր Խաչի դաշտային հոսպիտալներ հիմնվեցին Էրիվան նահանգում, ինչպես նաև 1896թ., երբ Ամերիկյան Կարմիր Խաչի կամավոր Կլարա Բարտոնը օգնություն էր ցուցաբերում Օսմանյան Թուրքիայի տիրապետության տակ տառապող հայ բնակչությանը:

Review of ARCS foundation

The Humanitarian Mission of Red Cross in Armenia started in 1877, when field hospitals of the Finnish Red Cross were established in Erivan region, as well as in 1896, when Clara Barton, a volunteer of the American Red Cross was assisting heavily suffering Armenian population in Ottoman Turkey.

| | | |
|---|---|---|
| ՀՀ Պառլամենտը վավերացրեց ՀԿԽԸ կանոնադրությունը | 1920 | The Parliament of RA ratified the Statutes of ARCS |
| ՀԿԽԸ ժամանակավոր դադարից հետո վերսկսեց գործունեությունը | 1921 | The activities of ARCS were resumed after temporary cancellation |
| Խորհրդային Հայաստանի ժողկոմխորհի որոշմամբ շարունակվեց ՀԿԽԸ գործունեությունը և վերահաստատվեց կանոնադրությունը | 1922 | The activities of ARCS were resumed and its Statutes was re-approved by the Government of Armenian Soviet Socialist Republic |
| ՀԿԽԸ դարձավ ԽՍՀՄ Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի Ընկերությունների դաշինքի անդամ | 1925 | ARCS became a member of the Alliance of Red Cross and Red Crescent Societies of USSR |
| ՀԿԽԸ 14-րդ համագումարում ՀԿԽԸ հռչակվեց որպես ՀՀ գործող Կարմիր Խաչի միակ ազգային ընկերություն | 1992 | ARCS was declared as the only National Society in the country during the 14th session of General Assembly of ARCS |
| ՀՀ-ում բացվեց ՀԿԽԸ «Գրացիա» միջազգային վերականգնողական կենտրոնը | 1992 | “Gratsia” International Rehabilitation Center of ARCS was established in RA |
| ՀՀ միացավ 1949թ. Ժնևի 4 Կոնվենցիաներին և դրա 1977թ. առաջին և երկրորդ Լրացուցիչ արձանագրություններին | 1993 | RA ratified the Geneva Conventions of 1949 and its first and second Additional Protocols of 1977 |
| ՀԿԽԸ ճանաչվեց ՀՀ Նախագահի հրամանագրով | 1993 | ARCS was recognized by the RA President’s statement |
| ՀԿԽԸ ճանաչվեց Կարմիր Խաչի Միջազգային կոմիտեի կողմից որպես 166-րդ ազգային ընկերություն | 1995 | ARCS was recognized by the International Committee of the Red Cross and the 166th National Society |
| ՀԿԽԸ դարձավ Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի Ընկերությունների Միջազգային ֆեդերացիայի անդամ | 1995 | ARCS was admitted to the International Federation of Red Cross and Red Crescent Societies as its full member |
| Սոլֆերինո նահանգի Կարմիր խաչի թանգարանում տեղադրվեց ՀԿԽԸ հուշաքարը | 1997 | ARCS memorial plate was placed in the Red Cross Museum of Solferino |
| Ժնևում կայացած ԿԽ/ԿՄ ՄՖ 13-րդ Համագումարում ՀԿԽԸ-ն երկու տարի ժամկետով ընտրվեց ԿԽ/ԿՄ ՄՖ Կազմակերպության զարգացման հանձնաժողովի անդամ | 2001 | ARCS was elected as member of Organizational Development Commission by the 13th session of IFRC General Assembly |
| ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «Կարմիր խաչի և Կարմիր մահիկի խորհրդանշանների գործածության և պաշտպանության մասին» ՀՀ օրենքը | 2002 | The National Assembly of RA adopted law on the use and protection of Red Cross and Red Crescent emblems |
| Ժնևում կայացած ԿԽ/ԿՄ ՄՖ 14-րդ համագումարում ՀԿԽԸ-ն վերընտրվեց ԿԽ/ԿՄ ՄՖ Կազմակերպության զարգացման հանձնաժողովի անդամ | 2003 | ARCS was re-elected as a member of Organizational Development Commission by the 14th session of IFRC General Assembly in Geneva |
| Սեուլում կայացած ԿԽ/ԿՄ ՄՖ Համագումարում ՀԿԽԸ Երիտասարդական բաժինն ընտրվեց Երիտասարդական հանձնաժողովի անդամ | 2005 | ARCS Youth Department was elected as a member of Youth Commission during the session of IFRC General Assembly in Seoul |
| Ավստրիայում կայացած Եվրոպական համագործակցության համաժողովի ժամանակ ՀԿԽԸ Երիտասարդական բաժինն ընտրվեց որպես կոորդինացման կոմիտեի անդամ | 2005 | ARCS Youth Department was elected as a member of Coordination Committee by European Coordination Committee in Austria |
| Աթենքում կայացած հանդիպման ժամանակ ՀԿԽԸ Աղետների կառավարման բաժինն ընդգրկվեց Եվրոպական ԿՄ և ԿՄ ԱԸ-ների սոցիալ-հոգեբանական աջակցության ցանցում | 2006 | ARCS Disaster Management and Population Movement Department was included as a member in European RC/RC NSs Network for Psychological Support during the meeting in Athens |
| ՀՀ միացավ Ժնևի կոնվենցիաների 2005թ. 3-րդ լրացուցիչ արձանագրությանը: | 2011 | RA ratified the third Protocol to Geneva Conventions of 2005 |

## ՀԿԽԸ Առաքելությունը

Նվազեցնել ազգաբնակչության խոցելիությունը՝ մարդասիրության ուժի մոբիլիզացմամբ, նախապատրաստվել դիմակայելու այն իրավիճակներին, որոնք կարող են բնակչության խոցելիության պատճառ դառնալ, ցուցաբերել անհրաժեշտ օգնություն՝ սատարելով սոցիալ-տնտեսական ծանր պայմաններում գտնվող մարդկանց:

## Նպատակը

Կազմակերպության հիմնական նպատակն է կանխարգելել և թեթևացնել մարդկային տառապանքները՝ անկախ ազգությունից, ռասսայական, սեռային, դասակարգային պատկանելությունից, կրոնական և քաղաքական հայացքներից:

## Նախագահ

Մխիթար Մնացականյան

## Գլխավոր քարտուղար

Աննա Եղիազարյան

## Պատվավոր նախագահ

Աշոտ Սարգսյան

## Պատվավոր անդամներ

| | |
|---|---|
| Ռիտա Փարսադանյան | ՀԿԽԸ նախագահ 1975-1991թթ. |
| Պիեռ Միշո | Ֆրանսիական Կարմիր խաչ |
| Գերհարդ Մայեր | Գերմանական Կարմիր խաչ |
| Մովսես Պողոսյան | Գերմանական Կարմիր խաչի ներկայացուցիչ |
| Դերենիկ Դումանյան | ՀՀ Առողջապահության նախարար 2012-2014 |
| Գագիկ Մարտիրոսյան | ՀՀ Պետնախարար 1993-1995 |
| Գուֆար Կուրմաև | Ռուսական Կարմիր Խաչ, փրկարար |
| Հարություն Եսոյան | ՀԿԽԸ փրկարար |
| Վալերի Վարդանյան | ՀԿԽԸ փրկարար |
| Կլաուս Հիկե | Բավարական Կարմիր խաչ |
| Մայքլ Ուիբե | Գերմանական Կարմիր խաչի Բադեն-Վյուրտեմբերգ երկրամասային կազմակերպություն |
| Կառլ Շայդե | քահանա, Գթության խոհանոցի ղեկավար |

## Բարերարի կոչում ստացած կազմակերպություններ

Կապանի «Դենո Գոլդ Մայնինգ քամփնի» ՓԲԸ
Գերմանական Կարմիր խաչի Բադեն- Վյուրտեմբերգ երկրամասային կազմակերպություն

## Ընդհանուր տեղեկություններ

| | |
|---|---|
| Մարզային մասնաճյուղ | 11 |
| Տարածքային մասնաճյուղ | 1 |
| Համայնքային մասնաճյուղ | 52 |
| Աշխատակիցներ | 70 |
| Անդամներ | 3400 |
| Կամավորներ | 2500 |
| «Գրացիա» միջազգային վերականգնողական կենտրոն | 1 |
| Առաջին օգնության ուսումնամեթոդական կենտրոն | 1 |
| Հյուրանոցային համալիր | 1 |
| Տարածաշրջանային բազա | 1 |
| Ուսումնական կենտրոն | 1 |

## ARCS Mission

To reduce vulnerability of the population through mobilization of the power of humanity, to be prepared to cope with situations, which may cause vulnerability among the population, to provide essential support by assisting people made vulnerable by harsh socioeconomic conditions.

## Goal

The overall goal of the Society is to prevent and alleviate human sufferings, regardless of nationality, race, sex, religious beliefs, class and political opinions.

## President

Mkhitar Mnatsakanyan

## Secretary General

Anna Yeghiazaryan

## Honorary President

Ashot Sargsyan

## Honorary Members

| | |
|---|---|
| Rita Parsadanyan | ARCS President throughout 1975-1991 |
| Pier Michaud | French Red Cross |
| Gerhard Mayer | German Red Cross |
| Movses Poghosyan | German Red Cross representative |
| Derenik Dumanyan | RA Minister of Healthcare 2012-2014 |
| Gagik Martirosyan | State Minister, RA 1993-1995 |
| Gaphur Kurmayev | Russian Red Cross, Rescuer |
| Harutyun Yesoyan | ARCS, Rescuer |
| Valeri Vardanyan | ARCS, Rescuer |
| Claus Heike | Bavarian Red Cross |
| Michael Uibel | German Red Cross Baden-Wurtemberg Provincial Branch |
| Karl-Heinz Scheide | Priest, Coordinator of Soup Kitchen Program |

## Benevolent organizations

Deno Gold Mining Company
German Red Cross Baden Wurttemberg Provincial Branch

## Overview

| | |
|---|---|
| Regional Branches | 11 |
| Territorial Branches | 1 |
| Community Branches | 52 |
| Employees | 70 |
| Members | 3400 |
| Volunteers | 2500 |
| “Gratsia” International Rehabilitation Centre | 1 |
| First Aid Training Methodological Centre | 1 |
| Hotel Compound | 1 |
| Regional Warehouse Base | 1 |
| Training Centre | 1 |



# ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը, նպատակ ունենալով աջակցել պետական համակարգին՝ նվազեցնելու սոցիալապես անապահով մարդկանց խոցելիությունը և բարելավել համայնքների բնակչության առողջական վիճակը, լայնածավալ գործունեություն է ծավալում սոցիալական աջակցության և առողջապահության ոլորտներում

# SOCIAL SUPPORT AND HEALTHCARE

**With the purpose of assisting the state structures, decreasing social vulnerability of the people in need, as well as improving health conditions of people in communities, the Armenian Red Cross Society implements large-scale activities in social support and healthcare spheres**

# ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը, նպատակ ունենալով աջակցել պետական համակարգին՝ նվազեցնելու սոցիալապես անապահով մարդկանց խոցելիությունը և բարելավել համայնքների բնակչության առողջական վիճակը, լայնածավալ գործունեություն է ծավալում սոցիալական աջակցության և առողջապահության ոլորտներում: Հայկական Կարմիր խաչի ընկերությունն իրականացնում է մի շարք սոցիալական ծրագրեր՝ ուղղված միայնակ ծերերի, հանրակացարանաբնակ երեխաների սոցիալական իրավիճակի բարելավմանը:

ՀԿԽԸ-ն իրականացնում է. բնակչության սոցիալական վիճակի ուսումնասիրություն, սոցիալական ծառայությունների մատուցում. սննդամթերքի, հոգեբանական աջակցության և խորհրդատվության տրամադրում:

Այսօր մարդկության առջև ծառացած են մի շարք արդիական առողջապահական խնդիրներ, որոնք պահանջում են հրատապ արձագանք և լուծումներ: Այդ խնդիրներից են տուբերկուլյոզը և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ը:

ՀԿԽԸ գործունեությունն այս ուղղությամբ նպատակ ունի կանխարգելել նշված հիվանդությունները և նվազեցնել թիրախային խմբերի խոցելիությունը: Կանխարգելիչ միջոցառումներից են լուսաբանումը և կրթումը, որոնք բարձրացնում են իրազեկվածության մակարդակը թե՛ հանրության, և թե՛ շահառուների շրջանում և նպաստում այդ հիվանդների հանդեպ խտրականության և խարանի դրսևորումների վերացմանը:

# SOCIAL SUPPORT

With the purpose of assisting the State bodies, to decrease social vulnerability of the people in need, as well as improving health of people in communities, the Armenian Red Cross Society (ARCS) implements large-scale activities towards providing social support to specified groups of populations. With the purpose of assisting the State bodies, to decrease social vulnerability of the people in need, as well as improving health of people in communities, the Armenian Red Cross Society (ARCS) implements large-scale activities in the spheres of Social Support and Healthcare. ARCS implements a number of social programs directed at improvement of lonely elderly people and social conditions of the children living in dormitories. ARCS activity areas include population' social conditions investigation, social service, food, medicines, clothing, psychological and counseling support providing.

Today the humanity is facing a number of actual health problems which require urgent addressing and solution. Among those problems are tuberculosis and HIV/AIDS. The overall goal of ARCS in this direction is prevention of the mentioned diseases and reduction of target groups vulnerability, support the beneficiaries' treatment course through encouraging treatment adherence.

Means of prevention include dissemination and education, to raise awareness both among general public and among beneficiaries and reduce stigma and discrimination.

## Սոցիալ-հոգեբանական աջակցություն միայնակ փախստական ծերերին և երեխաներին

«Սոցիալ-հոգեբանական աջակցություն միայնակ փախստական ծերերին և երեխաներին» ծրագրի շրջանակներում ավելի քան 30 կամավոր՝ ԵԿԽ 4 լիդերների գլխավորությամբ Երևան, Աբովյան և Հրազդան քաղաքներում գտնվող հանրակացարաններում բնակվող շուրջ 120 միայնակ փախստականների համար իրականացրել են շաբաթական այցելություններ, ամիսը մեկ անգամ տրամադրել սնունդ և երեք ամիսը մեկ անգամ՝ հիգիենիկ պարագաներ: Նրանք կազմակերպել են զանազան սոցիալական և մշակութային միջոցառումներ, ինչպես, օրինակ՝ այցելություններ թատրոններ, համերգներ, քաղաքից դուրս գտնվող տեսարժան վայրեր, նվերներով և քաղցրեղենով նշվել են շահառուների ծննդյան օրերը: Շաբաթական այցելությունների ժամանակ, ի լրումն զանազան տնային աշխատանքների՝ որոշ հանրակացարաններում գործել է նաև հատուկ կահավորված կենցաղային սենյակ՝ շահառուների լվացքի և արդուկի համար:

Նույն ծրագրի մեկ այլ բաղադրիչով, որը կոչվում է «Ժպիտների ակումբ»,

## “Psycho-social support to children and elderly people”

In the framework of the “Psycho-Social Support to Children and Elderly People” program, 30 volunteers supervised by the four RCY leaders paid weekly visits to 120 elderly lonely refugee people living in dormitories in Yerevan, Hrazdan and Abovyan cities. Besides, the voluntrees distributed food parcels once a month, hygienic parcels every quarter, and organized social and cultural events, such as visits to theatres, museums, sightseeing and outings. In addition, volunteers celebrate the birthdays of the beneficiaries with sweets and presents. In addition to minor household support that the volunteers realize during the weekly visits, in some of the dormitories there are special rooms for organizing the laundry and ironing for the elderly beneficiaries.

բազմակողմանի կրթական, մշակութային և ինտեգրման միջոցառումներ են կազմակերպվել նույն հանրակացարաններում բնակվող անապահով և փախստական ընտանիքների երեխաների համար: Հանրակացարաններում հատուկ կահավորված սենյակներում ծրագրի կամավորները ամենօրյա պարապմունքներ են անցկացրել երեխաների համար. իրականացրել են դասապատրաստում և զանազան խմբակների վարում (մաթեմատիկայի, օտար լեզուների, աշխարհագրության և այլն): Ucom ընկերության աջակցությամբ իրականցվել են նաև համակարգչային դասընթացներ: Պարապմունքներից զատ ամեն օր կամավորները կազմակերպել են սպորտային և ժամանացային միջոցառումներ, իսկ ամեն ամիս երեխաները մասնակցել են մշակութային միջոցառման՝ այց թատրոն, թանգարան և տեսարժան վայրեր: Երեխաների մասնակցությամբ նաև կազմակերպվել են մի շարք տոնակատարություններ՝ Զատկի, Ամանորի, Հունիսի 1-ի, և այլն: Իսկ ամռանը երեխաների համար կազմակերպվել է հանգստի և վերականգնողական ճամբար: Ծրագրում ընդգրկված է մոտ 200 երեխա:

Սոցիալ-հոգեբանական ծրագիրն իրականցվում է Ավստրիական և Շվեյցարական Կարմիր խաչի Ազգային Ընկերությունների ֆինանսավորմամբ:

## Սիրիահայ երեխաների և երիտասարդների կայուն զարգացումը Հայաստանում

2016թ. հաջողությամբ իրականացվել են սիրիահայ երեխաների և երիտասարդների կայուն զարգացմանն ուղղված ծրագրերը՝ Դանիական Կարմիր խաչի հետ համագործակցությամբ: Երեխաների համար կազմակերպվել է 6 - ամսյա ինտերակտիվ թեմատիկ պարապմունքների շարք: Դրանք անցկացվել են Երևանի թվով 10 դպրոցներում մոտ 200-ից ավել սիրիահայ և տեղացի երեխաների համար: Պարապամունքների հիմքում ընկած է Կարմիր խաչի/Կարմիր մահիկի Ազգային Ընկերությունների ֆեդերացիայի (ԿԽՄՖ) և Սեյվ դը Չիլդրեն հիմնադրամի կողմից համատեղ մշակված մեթոդաբանությունը:

Երեխաները պարապմունքներին մասնակցել են մինչև 18 անձից բաղկացած խմբերով և ոչ ֆորմալ մեթոդներով՝ դերախաղեր, քննարկումներ, նկարչություն, պար և այլն, անդրադարձել այնպիսի խնդիրների, ինչպիսին են վախի և սթրեսի հաղթահարումը, շրջակա միջավայրի ճանաչումը, ապագայի կառուցումը և այլն: Ծրագրում կարևոր տեղ է հատկացվել նաև մշակութային և համայնքային միջոցառումներին, որոնք պարտադիր են յուրաքանչյուր խմբի համար և նախատեսում են այցեր տարբեր մշակութային և պատմական հաստատություններ՝ թանգարաններ, պատկերասրահներ, թատրոններ և մոտակա տեսարժան վայրեր, ինչպես նաև աշխատանքներ համայնքներում՝ շաբաթօրյակներ, կանաչապատում և այլն: Ծրագրի ավարտին կազմակերպվել է նաև ամառային ճամբար այն երեխաների համար, ում հետ հավելյալ աշխատանքի կարիք է զգացվել:

«Երիտասարդների կայուն զարգացումը» ծրագրում ներգրավված երիտասարդների համար իրականացվել են նորարարական և երիտասարդական միջոցառումներ՝ հավաքներ, գրաֆիտի, քաղաքային այգեգործություն, բանավեճի ակումբ, ստեղծագործական խմբեր (թատերական,

Another component of this program is the "Smiley club", in the framework of which, the volunteers organize comprehensive educational, cultural and integration promoting events for children from refugee or poor families living the dormitories. In specially furnished and equipped rooms in the dormitories, the volunteers realized daily sessions to help children with homework and run various clubs (Maths club, Language club, Geography club, etc.). With the support of UCOM company, computer and internet club was conducted for the children. Besides the sessions, the volunteers also organize sport and entertaining activities. Every month the children participated in the cultural events, such as visits to theatre, museums and sightseeing. The children also participated in the celebration of certain holidays, such as Easter, New Year, June 1 st, etc. During summertime, a rehabilitation camp was organized for the children.

There were 200 children reached by the program activities.

The program was realized with the support of Austrian and Swiss Red Cross National Societies.

## Syrian-Armenian Children and Youth Resilience program

During 2016 ARCS has successfully implemented Resilience programs for Syrian-Armenia children and youth. 6 months school sessions were organized for the children in about 10 schools of Yerevan for more than 200 Syrian-Armenian and local children. The sessions are based on the methodology jointly developed by the IFRC and Save the Children foundation. The children took part in the sessions in groups consisting up to 18 people. The sessions are conducted in interactive ways, including roleplays, discussions, painting, dancing, etc. The topics are built around issues, such as overcoming fear and stress, environment, future, etc. Special importance has been given to the community and cultural events, which have been obligatory for each group and suggested visits to various cultural and historical places` museums, galleries, theaters and nearby sights. The community events included cleaning activities, gardening, etc. At the end of the program a summer camp was organized for the beneficiary children who needed more support for integration.

Youth and innovative events were organized for the beneficiaries of Youth Resilience Program, such as gatherings, wall painting, urban gardening, discussion club, performance groups (drama, band and dancing), etc. The program aimed at promoting the integration and resilience of the Syrian-Armenian young people, through enabling


Today
Happy




Paz

նվագախումբ, պար) և այլն: Ծրագրի նպատակն էր խթանել երիտասարդների ինտգրումն ու կայուն զարգացումը՝ հնարավորություն ընձեռելով նրանց մասնակցելու երիտասարդական միջոցառումների և իրականացնելու իրենց իսկ գաղափարներն ու նախաձեռնությունները:

Տարեվերջին ծրագրին ավելացան նաև տարածաշրջանային միջոցառումներ՝ ներգրավելով նաև Վրացական և Ուկրաինական Կարմիր խաչերի համանուն ծրագրերի մասնակիցներին և շահառուներին, ինչի շրջանակներում կազմակերպվեցին տեսանյութեր պատրաստելու և սոցիալ-հոգեբանական դասընթացներ և լուսանկարների միջազգային ցուցահանդես: Ընդհանուր առմամբ ծրագրին մասնակցել է մոտ 150 երիտասարդ:

## «Համայնքային ինտեգրացված տնային խնամք և առողջ ծերացում»

Բնակչության ծերացումը՝ ծնելիության և երկարակեցության ցուցանիշների տեղաշարժն ամբողջ աշխարհում դասվում է արդի խնդիրների շարքը: 21-րդ դարի կարևորագույն հիմնախնդիրներից մեկը կարող է դառնալ վերջին հարյուրամյակում կյանքի միջին տևողության զգալի բարձրացումը, ինչը կհանգեցնի տարեց և ծեր մարդկանց (65 տարեկան և բարձր տարիքի մարդկանց) թվի գերազանցմանը երեխաների թվին: Ուսումնասիրությունները փաստում են, որ 2050թ. Եվրոպայում 65-ից բարձր տարիք ունեցողների քանակը կհասնի մինչև 70%:

Բնակչության ծերացումը տեղի է ունենում ոչ միայն եվրոպական երկրներում, այլ նաև Հայաստանում: Հայաստանն այսօր կանգնած է երկրի ծերացման հետ կապված և դրանից բխող հիմնախնդիրները լուծելու մարտահրավերների առջև:

Ըստ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների, ծնելիության անկումն ու միգրացիայի բարձր տեմպերը հանգեցրել են նրան, որ 2016թ. տարեսկզբի դրությամբ աշխատունակ բնակչությունը կազմել է ՀՀ մշտական բնակչության ընդհանուր թվի 66.3%-ը, իսկ 20.8%-ը՝ աշխատունակ տարիքից ցածրը, 63 տարեկան և բարձր տարիքի մարդկանց թիվը կազմում է բնակչության ընդհանուր թվի 12.9%-ը: Տարիքային կենսաթոշակառուների թիվը կազմում է 307 449: Համաձայն ԱՎԾ-ի կազմած՝ Հայաստանում ակտիվ ծերացման տվյալների, որոնք վերաբերում են տարեցների զբաղվածության, առողջապահության և կրթության ոլորտներին, իրավիճակը բավարար չէ, և այդ ոլորտներում Հայաստանի Հանրապետությունը դեռևս շատ անելիքներ ունի:

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը, նպատակ ունենալով աջակցել պետական համակարգին՝ նվազեցնելու սոցիալապես անապահով մարդկանց խոցելիությունը և բարելավելու համայնքների բնակչության առողջական վիճակը, լայնածավալ գործունեություն է ծավալում բնակչության համապատասխան խմբերին սոցիալական աջակցություն տրամադրելու ուղղությամբ:

Այս ուղղության շրջանակներում 2016 թվականի հոկտեմբերին ՀԿԽԸ-ն մեկնարկեց միայնակ տարեցների աջակցության նոր ծրագիր, որն իրենից ներկայացնում է տարեցների խնամքի մի նոր մոդել:

Այն իրականացվում է Շվեյցարական Կարմիր Խաչի (ՇԿԽ) և Մոնակոյի Կարմիր Խաչի հետ համագործակցությամբ և ուղղված է տարեցների, հաշմանդամների և քրոնիկ հիվանդների խնդիրներին՝ տնային խնամքի

them to be engaged in youth activities and to make real their own ideas and initiatives.

Near to the end of the year, some regional activities were added to the program involving the beneficiaries and participants of the similar programs of Ukrainian and Georgian Red Cross NSs, in the framework of which three events were organized; video making and psychosocial trainings and international photo exhibition.

All in all about 150 young people took part in the program.

## Integrated Community based Home Care and Healthy/Active Ageing

Population ageing with changes of the fertility and longevity indices, are among the current problems around the world. One of the most important issues of the 21st century can be a significant increase of the life expectancy during the last century, which would result the excess of the number of elderly (65 years of age and older people) over the number of children. Studies show that in 2050 the number of people aged over 65 will reach 70% in Europe.

The population aging is taking place not only in Europe but also in Armenia. Today our country is facing the challenges concerning ageing and the problems arising from it.

According to the National Statistical Service, the decline of the birth rate and high rates of migration led to the fact that in beginning of 2016 the working population was 66.3% of permanent residents and 20.8% below the working age, the number of people 63+ is 12.9% of the total population. The number of age pensioners is 307 449.

According to the data related active ageing in Armenia provided by NSS the situation regarding to employment, health and education of elderly is unsatisfactory, and there is much to be done in these areas in Armenia.

Armenian Red Cross Society aimed to support the state system to reduce the vulnerability of insecure people and to improve the health condition of the population of communities, provides large scale work towards providing social support to the population target groups.

Within this framework in October 2016 ARCS launched a new elderly supporting project, which is a new model of elderly care.

It is implemented in cooperation with Swiss Red Cross and Monaco Red Cross and aims to the problems of elderly, disabled and chronically ill by implementing the integrated home care and the participa-

ինտեգրացված համակարգի և համայնքներում իրականացվող աշխատանքի ներդրմամբ:

Ծրագրի հիմնական նպատակն է բարելավել տարեցների, քրոնիկ հիվանդություն ունեցող անձանց և հաշմանդամների կյանքի որակը՝ ինտեգրացված առողջապահական և սոցիալական ծառայությունների հասանելիության բարելավման միջոցով:

Ծրագիրն իրականացվում է ՀՀ Լոռու և Շիրակի մարզերում: 2016 վերջին եռամսյակի ընթացքում, նախնական կարիքների գնահատման արդյունքում ծրագրում ներգրավվել են յուրաքանչյուր մարզից 20-ական առավել խոցելի տարեցներ, որոնք ստացել են մասնագիտական բուժքույրական խնամք տնային պայմաններում:

## Համայնքների դիմակայունության բարձրացում բնական աղետների հետ կապված առողջապահական ռիսկերի և ՄԻԱՎ-ի նկատմամբ

ՀԿԽԸ կողմից ավելին քան 5 տարի Ամերիկյան Կարմիր խաչի հետ համատեղ իրականացվում է ՄԻԱՎ-ի կնախարգելմանն ուղղված ծրագիր Երևանում, Գյումրիում և Վանաձորում: Վերջին երկու տարիներին, հաշվի առնելով նշված համայքներում առկա բնական աղետների ռիսկը, ինչպես նաև մեծ թվով կրթված և ճիշտ տեղեկատվություն տրամադրելու կարողություններ ունեցող կամավորների առկայությունը՝ ծրագրին ավելացել է նոր բաղադրիչ՝ բնական աղետների հետ կապված առողջապահական ռիսկերի վերաբերյալ: Ծրագրի հիմնական թիրախը նշված համայնքների երիտասարդներն են, 15-23 տարեկան, որոնք ստանում են գիտելիքներ վարակիչ հիվանդությունների, բնական աղետների դեպքում հնարավոր բռնկումների, ինչպես նաև ՄԻԱՎ-ի կանխարգելման վերաբերյալ: Երիտասարդների մասնակցությամբ իրականացվել են նաև մեծածավալ միջոցառումներ: ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օրը, 2016 թվականի դեկտեմբերի 1-ը, նախորդ տարվա հաջողված փորձը հաշվի առնելով, կրկին նշվել է UNAIDS հետ համագործակցությամբ: Թիրախ համայնքների ավագ դպրոցների աշակերտների համար կազմակերպվել է կինոդիտում՝ օգտագործելով UNAIDS կողմից հենց այդ տարիքային խմբի համար մշակված և նկարահանած տեսանյութը, բաժանվել է տեղեկատվական նյութ:

## Շաքարային դիաբետի կանխարգելում և խնամքի վերաբերյալ կրթում

Ոչ վարակիչ հիվանդությունները, որոնց թվում է նաև շաքարային դիաբետը, մահվան առաջատար պատճառ են հանդիսանում ամբողջ աշխարհում, այդ թվում նաև Հայաստանում: Հայաստանում մահացության պատճառների ցուցակում շաքարային դիաբետը զբաղեցնում է հինգերորդ հորիզոնականը:

Ըստ ՀՀ առողջապահության նախարարության (ԱՆ) 2013 թ. տվյալների շաքարային դիաբետով հաշվառված հիվանդների թիվը կազմում է 67,847 մարդ: Միայն 2013 թ.-ին գրանցվել է շաքարային դիաբետի 8,322 նոր դեպք:

Վերջին 20 տարիների ընթացքում շաքարային դիաբետով գրանցված հիվանդների թիվը կրկնապատկվել է: II տիպի շաքարային դիաբետով հիվանդացության աճին նպաստող հիմնական գործոններն են.

tory community work. The main goal of the project is to increase the quality of life of elderly, chronically ill and disabled persons through better access to integrated health and social services. The project is implemented in Lori and Shirak Regions in Armenia. Based on needs assessment, 20 of the most vulnerable elderly from each region received professional nursing care at home during the last quarter of 2016.

## Strengthening communities' resilience to health risks associated with natural disasters' and HIV

ARCS in cooperation with American Red Cross for more than 5 years is implementing the program aimed at HIV prevention in Yerevan, Gyumri and Vanadzor. Taking into account the risk of natural disasters in the mentioned communities, as well as the large number of well-educated volunteers with capacity to provide accurate information the new component concerning the health risks associated with natural disasters was added to the project the last two years. The main target group consists of young people of these communities, aged 15-23, who receive knowledge about infectious diseases, possible outbreaks associated with natural disasters, as well as HIV prevention. Large scale events were also held with the participation of young people. Taking into account the last year's successful experience on the World AIDS Day, on December 1, 2016, it was also celebrated in cooperation with UNAIDS. For high school students in target communities was organized a movie watching by using the video designed and produced by UNAIDS for mentioned age group, also informational material was distributed.

## Diabetes Prevention & Self-care Education for Vulnerable

Non-communicable diseases, including diabetes, are the leading cause of death around the world and also in Armenia. As the cause of death from diabetes is in the fifth place in Armenia.

According to the Ministry of Health (MOH) in 2013 the number of patients with diabetes was 67.847 people. Only in 2013 8.322 new cases of diabetes were registered. Over the past 20 years, the number of patients with diabetes has doubled. The main factors contributing to increased risk of type II diabetes are:

- անառողջ ապրելակերպը,
- հավելյալ քաշը և գիրությունը,
- ծխախոտի օգտագործման մեծ տարածվածությունը,
- ալկոհոլի օգտագործումը,
- ուրբանիզացիան և սթրեսը:

Նույնիսկ աճի նման դինամիկայի պարագայում շատերն անտեղյակ են իրենց կարգավիճակից և հետևաբար չեն ստանում անհրաժեշտ տեղեկատվություն, բուժում և խնամք:

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը՝ Դանիական Կարմիր խաչի հետ համագործակցությամբ և Դիաբետի Համաշխարհային հիմնադրամի ֆինանսավորմամբ իրականացնում է «Շաքարային դիաբետի կանխարգելում և խնամքի վերաբերյալ կրթում» ծրագիրը:

Ծրագրի նպատակն է ՀՀ Արարատի մարզում բարելավել շաքարային դիաբետի կանխարգելումը և հիվանդների խնամքը:

Ծրագրի խնդիրներն են՝

- կանխել շաքարային դիաբետի բարդությունները հիվանդների մոտ՝ ստեղծելով բարենպաստ միջավայր,
- բարձրացնել շաքարային դիաբետի վերաբերյալ բնակչության իրազեկվածությունը և խթանել առողջ ապրելակերպը:

2016 թվականի ընթացքում Արարատի մարզում բնակչության շրջանում իրականացվել է նախնական հետազոտություն՝ առողջ ապրելակերպի վերաբերյալ, թվով 28 բժիշկ և 48 բուժքույր ստացել են ծրագրի վերաբերյալ տեղեկատվություն, մշակվել և տպագրվել են տեղեկատվական, կրթական և հաղորդակցական նյութեր, հիմնվել են շաքարային դիաբետով հիվանդների 16 ինքնօգնության խմբեր՝ խնամքի վերաբերյալ պարբերական հանդիպումներ անցկացնելու նպատակով: ՀԿԽԸ 32 կամավոր մասնակցել են շաքարային դիաբետին վերաբերող կրթական դասընթացների՝ ինքնօգնության խմբերի հանդիպումները վարելու նպատակով: Նոյեմբերի 14-ին՝ Շաքարային դիաբետի դեմ պայքարի համաշխարհային օրը, Հայկական Կարմիր խաչի ընկերության մարզային մասնաճյուղը կազմակերպել էր «Քայլեր ուղղված Դիաբետի կանխարգելմանը» խորագրով միջոցառումը: Դիաբետի Համաշխարհային կազմակերպության «Գլոբալ Ուոք (Գլոբալ քայլք)» նախաձեռնության շրջանակներում կազմակերպված միջոցառման ժամանակ ՀԿԽԸ Արարատի մարզային մասնաճյուղի կամավորներն ու Արարատի մարզի քաղաքային և ընտրված գյուղական բնակավայրերի դպրոցականները քայլելով անցել են բնակավայրերի կենտրոնական փողոցներով՝ իրազեկման նյութ տրամադրելով բնակչությանը և ջատագովելով դիաբետի դեմ կանխարգելման կարևորությունը:

## Տուբերկուլյոզով հիվանդների կարողությունների հզորացում

Ծրագիրն իրականացվել է Միջազգային Կամիր Խաչի և Կարմիր Մահիկի Ֆեդերացիայի հետ համագործակցությամբ «Էլայ Լիլի և կոմպանի» կազմակերպության ֆինանսավորմամբ: Ծրագրի շահառուները ՀՀ Կոտայքի մարզում գրանցված և բուժում ստացող բոլոր ՏԲ հիվանդներն են: Ծրագրի նպատակը հիվանդների և նրանց հարազատներին տեղեկատվության

- Unhealthy lifestyle
- Overweight and obesity
- High prevalence of tobacco using
- Alcohol using
- Urbanization and stress.

Despite the dynamic of growth, the population mostly is unaware of their health status and therefore do not receive the necessary information, treatment and care.

Armenian Red Cross Society in cooperation with Danish Red Cross and with WDF financial support is implementing "Diabetes Prevention & Self-care Education for Vulnerable" project.

The aim of the project is improving prevention and care of diabetes in Ararat region.

The objectives are the following:

- To prevent the complications of diabetes among the patients by creating a favorable environment
- To raise the public awareness about the diabetes and promote the healthy lifestyle.

During the 2016 year among the population of Ararat region was conducted a baseline survey concerning healthy lifestyle. 28 doctors and 48 nurses received information about the program, informational, educational and communication materials were developed and published. 16 self-assistance groups were established among the patients with diabetes to conduct periodic meetings on care. ARCS 32 volunteers participated in educational courses related to diabetes to hold the meetings of self-assistance groups. On November 14, the World Diabetes Day, the regional branch of the Armenian Red Cross Society organized an event named "Steps to prevent diabetes." World Diabetes Organization within the initiative of "Global Walk" organized an event: ARCS Ararat branch volunteers and schoolchildren were walking in selected urban and rural settlements in Ararat region, providing materials for public awareness and defending the importance of prevention the diabetes.

## Empowering people with TB

The project is implemented in cooperation with the International Federation of Red Cross and Red Crescent with financial support of "Eli Lilly and Company" organization. Beneficiaries of the project



Հոկտեմբերի 5-ին, Արմենիա Մարիոթ հյուրանոցի «Տիգրան Մեծ» սրահում, Հայկական և Շվեյցարական Կարմիր խաչերը հայտարարեցին «Համայնքային ինտեգրացված տնային խնամք և առողջ ծերացում» ծրագրի մեկնարկը:
On 5 October, Armenian and Swiss Red Crosses announced the launch of “Integrated community-based home care service provision and healthy ageing” program at ‘Tigran Mets’ hall of Armenia Marriott Hotel.






Շիրակի և Լոռու մարզերում կներդրվի տարեցների սոցիալ-առողջապահական խնամքի նոր մոդել

Home-based social health integrated care new model to be introduced into Shirak and Lori Regions

տրամադրումն է՝ տուբերկուլոզին ուղղված որոշումների կայացմանը և դրանց կիրարկմանը նրանց մասնակցության խթանումը, խարանի և խտրականության նվազեցումը: 2015 թվականի ընթացքում ամսական միջինում 75 ՏԲ հիվանդ և նրանց հարազատները ստացել են հոգեբանական աջակցություն, մասնակցել են կրթական հանդիպումներին: 2016 թվականի մարտի 24-ին Տուբերկուլյոզի համաշխարհային օրվա կապակցությամբ, Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի Խ. Աբովյանի անվ. թիվ 1 ավագ դպրոցում և Էստրադային և ջազային արվեստի ստուդիայում կազմակերպվել էր շարադրությունների և նկարչական մրցույթ՝ «Խարանը՝ ճակատագիր» թեմայով:

Մարտի 25-ին երկու դպրոցներում էլ լավագույն աշխատանքների հեղինակներն ստացան իրենց մրցանակները:

Մրցույթը հայտարարելուց առաջ ՀԿԽԸ աշխատակիցներն ու կամավորները դպրոցականների համար լուսաբանման դասընթացներ էին անցկացրել, պատմել էին տուբերկուլյոզի և այդ հիվանդների դժվարությունների մասին: Սոցիալական վերաբերմունքը և կարծրատիպերը ձևավորվում են դեռ վաղ մանկությունից: Այն արտահայտությունները, որ մենք լսում ենք փոքր տարիքում, ամրանալով մեր ուղեղում, ամբողջ կյանքի ընթացքում ազդում են մեր վարքի ու հարաբերությունների վրա:

## ՄԻԱՎ-ի կանխարգելումը Հայաստանում

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը՝ Իտալական Կարմիր խաչի աջակցությամբ 2016 թ. շարունակել է իրականացնել «ՄԻԱՎ-ի կանխարգելումը Հայաստանում» ծրագիրը: Ծրագիրը նպատակաուղղված է ՄԻԱՎ-ի արդյունավետ հակազդմանը՝ բնակչության առավել խոցելի խմբերի շրջանում: Հատկանշական է, որ 2014թ.-ից իրականացվող ծրագիրը յուրաքանչյուր տարի թիրախավորում էր տարբեր խոցելի խմբերի /ներերակային թմրամիջոցներ օգտագործողներ, ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ, նրանց ընտանիքի անդամներ, երիտասարդներ և այլն/: 2016թ ընթացքում առաջնահերթությունը տրվել է լուսաբանման և տեղեկատվության տարածման միջոցառումներին և ՄԻԱՎ-ով ապրող երեխաներին կամ ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց երեխաներին ուղղված առողջապահական, կրթական և ժամանցային միջոցառումներին:

## Առողջ ապրելակերպ

Հաշվետու ժամանակահատվածում ԵԿԽ կամավորներն իրականացրել են բազմաբնույթ միջոցառումներ, որոնք նպատակ ունեին իրազեկելու ազգաբնակչությանը առողջապահական խնդիրների վերաբերյալ, մասնավորապես քարոզչական աշխատանքներ են տարվել առողջ ապրելակերպի խթանման, ոչ վարակիչ հվանդությունների կանախարգելման, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվության տարածման ուղղություններով: Կազմակերպվել են ինտերակտիվ պարապմունքներ դպրոցականների և ուսանողների շրջանում, ինչպես նաև իրականցվել են հանրային միջոցառումներ, ինչպես օրինակ զանգվածային հետազոտություններ՝ ՄԻԱՎ-ի նկատմամբ:

are all registered TB patients of Kotayq region, those who are currently getting treatment. The program aims to provide information to patients and their families, to promote their participation in decision making and implementation processes related TB, to reduce stigma and discrimination. In 2015, the monthly average of 75 TB patients and their relatives have received psychological support and participate in educational meetings.

Within the frame of the project on 24 March, 2016 Armenian Red Cross Society, on occasion of the World Tuberculosis Day, has organized essay and drawing competition titled “Stigma as a destiny” in the No. 1 high school and Pop and Jazz Art Studio in Abovyan city, Kotayq Region. On March 25 the authors of the best works from two schools got prizes.

Before the contest announcement, staff and volunteers of ARCS held dissemination sessions for schoolchildren telling them about Tuberculosis and stigma and discrimination that these patients face.

Social attitude and stereotypes are formed in early childhood. The phrases that we have heard in childhood attach to our brains, and made lifelong impact on our behavior and relationships.

## HIV prevention in Armenia

In 2016 ARCS with the support of Italian RC continued implementation of the HIV prevention program in Armenia. The program aimed at effective response to HIV among the vulnerable groups of population. It should be mentioned that, since 2014, the program has reached different targets every year; IDUs, PLHIV and their family members, etc. In 2016 the priority was given to the dissemination and spread of information as well as to the health, educational and entertaining events for PLHIV and their children.

## Healthy lifestyle

During the reporting period the RCY volunteers realized various events aiming at raising awareness of the general population about health related issues, specifically a campaign was organized for promotion healthy lifestyle, prevention of NCDs and HIV/AIDS. Using peer education method, about 20 young volunteers organized interactive sessions and dissemination seminars for 200 schoolchildren and 500 students` promoting healthy life style. Public campaigns were organized on World AIDS day, on December 1st in the universities of Yerevan and public testing was realized, as well as number of information materials were distributed to the students.



# «ԳՐԱՑԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

**«Գրացիա» միջազգային վերականգնողական կենտրոնում իրականացվում է ողնուղեղի, ողնաշարի, հենաշարժական ապարատի հիվանդությունների բուժում, ընդհանուր և հետվնասվածքային վերականգնում, հիվանդների մասնագիտական ուսուցում, սոցիալ-հոգեբանական վերականգնում, սանատոր-կուրորտային բուժում**

# “GRATSIA” INTERNATIONAL REHABILITATION CENTER

**The main activity areas of the Center are treatment of marrow, spinal cord, musculoskeletal diseases, general and post-traumatic rehabilitation, patients’ vocational training, psychosocial rehabilitation and sanatorium-and-spa treatment**

## «ԳՐԱՑԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

«Գրացիա» միջազգային վերականգնողական կենտրոնում իրականացվում է ողնուղեղի, ողնաշարի, հենաշարժական ապարատի հիվանդությունների բուժում, ընդհանուր և հետվնասվածքային վերականգնում, հիվանդների մասնագիտական ուսուցում, սոցիալ-հոգեբանական վերականգնում, սանատոր-կուրորտային բուժումը:
Ողնուղեղի և ողնաշարի վնասվածքով յուրաքանչյուր հիվանդի հետ աշխատում է առանձին բժիշկ, բուժքույր, վերականգնող թերապիստ, հոգեբան և սպորտային մարզիչ:
Կենտրոնն ունի ընդլայնված ստացիոնար և ամբուլատոր բժշկական ծառայություններ՝ ախտորոշում, ջրաբուժություն, ջրային մերսում, ցեխաբուժություն/տորֆաբուժություն, կինեզոթերապիա, ֆիզիոթերապևտիկ բուժում, բուժական և դասական մերսում, էլեկտրաթերապիա, ինհալացիոն բուժումներ, ասեղնաբուժություն սպորտային համալիր, սթրեսոլոգի կաբինետ, «ՍԿԵՆԱՌ» բաժանմունք, ներհյուսվածքային էլեկտրոստիմուլացիայի կաբինետ:
Կենտրոնի գործունեության ընթացքում արդեն բուժվել և իրենց առողջությունն են վերականգնել մոտ 13 000 հիվանդ ՀՀ-ից, ԱՊՀ-ից, Եվրոպայից և Մերձավոր Արևելքի մի շարք երկրներից: 2016թ. շրջանակներում բուժում է ստացել 860 հաշմանդամ, 41 զինծառայող, այդ թվում նաև՝ Ղարաբաղյան հակամարտության սրացման հետևանքով վիրավորված, 5 փախստական, ոստիկանության համակարգի 10 աշխատող:
Հունիսի 10-ին՝ «Գրացիա» միջազգային վերականգնողական կենտրոնում բուժվող զինվորների համար կազմակերպվել էր դասական համերգ:
Կենտրոնը գլխավորում է բժիշկ և ադմինիստատոր Ալեքսանդր Մնացականյանը:

## "GRATSIA" INTERNATIONAL REHABILITATION CENTER

The main activity areas of the Center are treatment of marrow, spinal cord, musculoskeletal diseases, general and post-traumatic rehabilitation, patients' vocational training, psychosocial rehabilitation and sanatorium-and-spa treatment.
In the Center each patient with marrow and spinal cord injuries is individually treated and cared by a doctor, nurse, rehabilitation therapist, psychologist and sport trainer.
The Center has broadened inpatient and outpatient rehabilitation services-diagnostics, hydropath, hydro massage, mud cure/peat cure, kinesiotherapy, physiotherapy procedures, medical and classical massage, electrotherapy, inhalation therapy, acupuncture, sport complex, stressologists' room, "SKENAR" Department.
During its activities about 13000 patients from RA, CIS countries, from a number of European and Middle East countries have already received treatment and rehabilitation in the Center.
During the year, 860 disabled people, 41 military personnel, including those wounded during Nagorno -Karabakh conflict escalation, 5 refugees, 10 policemen have been cured at the Center.
Dispensary home visits are also made to the registered disabled patients with spinal cord and marrow traumas, providing them with medical assistance and examination.
"Pharos" choir and "Kilikia" basketball team of the Center regularly participate in concerts and competitions organized for people with limited capacities in different countries and return with high appreciations.
Aleksandr Mnatsakanyan, doctor and administrator is the Head of the Center.





Համերգ՝ վերականգնողական կենտրոնում բուժվող զինծառայողների համար

Concert for the militaries under treatment in Rehabilitation Centre



# ԱՂԵՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՇԱՐԺ

# DISASTER MANAGEMENT AND POPULATION MOVEMENT

# ԱՂԵՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Աղետների կառավարման (ԱԿ) ուղղության հիմնական նպատակն է նվազեցնել ազգաբնակչության խոցելիությունը բնական և տեխնածին աղետների նկատմամբ՝ համայնքային մակարդակում աղետների ռիսկի նվազեցման միջոցով և հզորացնել Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) աղետների նախապատրաստման և արձագանքման (ԱՆԱ) համակարգը:

## «Կառուցենք դիմակայուն տեղական համայնքներ Վրաստանում և Հայաստանում» ծրագիր IV փուլ

«Կառուցենք դիմակայուն տեղական համայնքներ Վրաստանում և Հայաստանում» ծրագրի IV փուլը մեկնարկեց 2016թ. մայիսին: Ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրահանձնաժողովի մարդասիրական օգնության և քաղաքացիական պաշտպանության հարցերով գլխավոր վարչության (DIPECHO), Դանիական,Իսլանդական և Ավստրիական Կարմիր խաչի ընկերությունների կողմից, Կխ և ԿՄ ՄՖ-ի հետ համագործակցությամբ: Ծրագրի երրորդ փուլի թիրախ հանդիսացող ՀՀ Շիրակի մարզի 18 համայնքներին և 81 դպրոցներին ավելացան ևս յոթ համայնք և 84 դպրոց: Ծրագրում ընդգրկված շահառուներն են մոտ 26.200 դպրոցականներ և նրանց հարազատները՝ թվով մոտ 78.400 մարդ, ինչպես նաև 25 գյուղական համայնքներից 34 350 բնակիչ:

Ծրագրի շրջանակներում ՀՀ արտակարգ իրավիճակների (ԱԻՆ) ու Կրթության և գիտության նախարարությունների, մարզային և տեղական իշխանությունների և այլ շահագրգիռ գործընկերների հետ սերտ համագործակցությամբ հնարավոր դարձավ գրանցել հետևյալ հիմնական ձեռք բերումները.

1. 2016 մայիսին ՀԿԽԸ ԱԿ/ԲՏ բաժնի ներկայացուցիչները մասնակցեցին Թբիլիսիում կազմակերպված «Ելակետային ուսումնասիրություն» խորագրով դասընթացին, որի ընթացքում համաձայնեցվեց և հստակեցվեց ուսումնասիրության մեթոդաբանությունը: Հունիս ամսին, Շիրակի մարզի շահառու 8 համայնքներում իրականացվեց «Ելակետային ուսումնասիրություն»:
2. Օգոստոս – սեպտեմբեր ամիսների ընթացքում ՀԿԽԸ-ն 7 նորաստեղծ Համայնքային կամավորական թիմերի (ՀԿԹ) համար կազմակերպեց ԱՌԿ երկօրյա դասընթաց, ինչպես նաև 1-օրյա թարմացման դասընթաց՝ ծրագրի նախորդ փուլերում ներգրավված ՀԿԹ-ների համար:
3. Սեպտեմբերին ԱՌՆ և Աղետի ընտանեկան պլանի վերաբերյալ դասընթացներ կազմակերպվեցին նոր ներգրավված 87 դպրոցների 150 ուսուցիչների համար:
4. Ս.թ. սեպտեմբերին նոր ընդգրկված 7 ՀԿԹ-ներին տրամադրվեց փրկարարական գույք, իսկ նախորդ փուլում ընդգրկված 18 ՀԿԹ-ի գույքը թարմացվեց էլեկտրական գեներատորներով:
5. Հաշվետու ժամանակաշրջանում գրանցվել է Համայնքային կամավորական թիմերի կողմից 6 արտակարգ իրավիճակներին արձագանք:
6. Նոյեմբերի 16-ին կազմակերպվել է ուսումնական վարժանք՝ հինգ ՀԿԹ-ի մասնակցությամբ՝ Արեգնադեմ, Շիրակավան, Մեծ Սեպասար, Քեթի և Բավրա

# DISASTER MANAGEMENT

The main aim of Disaster Management (DM) direction is to reduce the vulnerability of the population towards natural and man-made disasters through disaster risk reduction on a community level and strengthen Disaster Preparedness and Response structure of the Armenian Red Cross Society (ARCS).

## "Building Resilient local communities in Georgia and Armenia" Project IV phase

IV phase of "Building Resilient local communities in Georgia and Armenia" Project has started in May 2016. The Project is co-funded by the European Commission Humanitarian Aid and Civil Protection Department, Danish Red Cross, Icelandic Red Cross, and Austrian Red Cross and in consortium with the International Federation of Red Cross and Red Crescent Societies. 7 new communities and 87 schools have joint those 18 communities and 83 schools already engaged in the III phase of the Project in Shirak region. Number of beneficiaries engaged in the Project is around 78.400 people including 26200 pupils and their relatives as well as 34350 people from 25 rural communities.

Within the framework of the Project, in close cooperation with the Ministry of Emergency Situations, Ministry of Education and Science and other stakeholders it becomes possible to indicate the following main achievements

1. In May 2016, representatives of ARCS DM/PM department has taken part on "Baseline Study" Regional training during which the methodology of baseline has been agreed and clarified. Afterwards, in June, "Baseline Study" was conducted in 8 communities of Shirak region.
2. In August – September 2016, ARCS has organized 2-day DRM trainings for 7 newly established CVG members, as well as 1 day refresher training for 18 CVGs from previous phases.
3. In September 2016, ARCS has organized DRR and FEP trainings for 150 teachers from 87 new schools engaged in the project.
4. In September 2016, 7 new CVGs have been provided with rescue equipment and rescue equipment of 18 CVGs from previous phases have been upgraded with electric generators
5. During the reporting period, 6 emergency calls have been registered by CVGs.
6. On 16th of November simulation exercise have been organized with participation of 5 CVGs of Aregnadem, Shirakavan, Mets Sepasar, Qeti, Bavra target communities, as well as Head of Shirak Regional Rescue Service, representative from Regional Municipality.

համայնքներից, ինչպես նաև Շիրակի Մարզային փրկարար ծառայության ղեկավարի և մարզպետարանի ներկայացուցիչների մասնակցությամբ:

7. Ծրագրի շրջանակներում հնարավորություն ընձեռնվեց նաև մասնակցություն ունենալ ս.թ. նոյեմբերի 29-ին դեկտեմբերի 2-ը Թբիլիսիում կազմակերպված Սենդայի տարածաշրջանային աշխատանքային հանդիպմանը: Միջոցառմանը մասնակցեցին Արտակարգ իրավիճակների նախարարության չորս աշխատակիցներ, ԱՌՆ Ազգային պլատֆորմի ներկայացուցիչը, «Կառուցենք անվտանգ և կայուն համայնքներ» և «Կառուցենք դիմակայուն տեղական համայնքներ Վրաստանում և Հայաստանում» ծրագրերի համակարգողները:

8. Դեկտեմբերի 7-ից 9-ը ՀԿԽԸ-ն կազմակերպեց «Ծրագրի առաջարկությունների մշակում» խորագրով դասընթաց «Կառուցենք անվտանգ և կայուն համայնքներ» և «Կառուցենք դիմակայուն տեղական համայնքներ Վրաստանում և Հայաստանում» ծրագրերի շրջանակներում:

9. Շահառու 169 դպրոցներին տրամադրվեցին հակահրդեհային գույք և ուսումնական/ իրազեկման բարձրացման նյութեր:

## «Կառուցենք անվտանգ և կայուն համայնքներ» ծրագրի II փուլ

«Կառուցենք անվտանգ և կայուն համայնքներ» ծրագրի երկրորդ փուլը մեկնարկել է 2015թ. դեկտեմբերին և շարունակվելու է մինչև 2018թ. նոյեմբեր:

2016 թ. փետրվարին Լոռու մարզպետարանում Մարզպետի տեղակալի, մարզպետարանի համապատասխան բաժինների և Մարզային փրկարար ծառայության պետի մասնակցությամբ կայացած հանդիպման ընթացքում ընտրվեցին 4 նոր շահառու համայնքներ իսկ Երևան քաղաքում ընտրվեցին նոր դպրոցներ՝ Երևանի քաղաքապետրանի կրթության վարչության հետ համատեղ:

Մայիսին Ստեփանավանում կազմակերպվեց դասընթաց Մեծ Պառնի, Օձուն, Սարչապետ և Մարգահովիտ համայնքների ՀԿԹ-երի համար: Դասընթացի թեմաները ընդգրկում էին Աղետների ռիսկի կառավարումը, Որոնողափրկարարության հիմունքները, Առաջին օգնությունը, Սոցիալ-հոգեբանական աջակցությունը, ԿԽ/ԿՄ շարժման հիմնարար սկզբունքները, Հաղորդակցությունը աղետների ժամանակ, Կարիքների գնահատումը արտակարգ իրավիճակներում /այդ թվում Sphere ստանդարտները/, Կլիմայի փոփոխությունը և կենսապայմանների պաշտպանությունը: Դասընթացին մասնակցություն ունեցավ և իր խոսքով հանդես եկավ Լոռու մարզային փրկարար վարչության պետ Հրաչիկ Անտոնյանը, ընդգծելով ՀԿԹ կարևորությունը մարզային մակարդակում աղետների ռիսկի նվազեցման հարցում:

Ավելին, նոր համայնքների և դպրոցների համար ձեռք բերվեց փրկարարական և հակահրդեհային գույք: Ծայրահեղ ձմեռային պայմանների պատճառով Օձուն, Մեծ Պառնի և Սարչապետ համայնքների Համայնքային կամավորական թիմերը ստացան նաև առատ ձյան պայմաններում աշխատելու համար նախատեսված փրկարարական գույք, իսկ առաջին փուլում ընդգրկված ՀԿԹ-ների հակահրդեհային գույքը թարմացվեց:

2016թ. մայիսին, ՀԿԽԸ ԱԿ/ԲՏ բաժնի ներկայացուցիչները մասնակցեցին Թբիլիսիում տեղի ունեցած «Ելակետային հետազոտություն» խորագրով տարածաշրջանային դասընթացին, որի ընթացքում տրամադրվեցին մեթոդաբանություն և տեխնիկական միջոցներ՝ այդ հետազոտությունը Հայաստանում իրականացնելու համար: Դասընթացին հաջորդեց Լոռու մարզի

7. Within the framework of the Project there was also an opportunity to participate on Sendai regional workshop organized from November 29 to December 2 in Tbilisi. Armenian delegation taken part at the workshop included 4 representatives from the Ministry of Emergency Situations, a representative from DRR National Platform, “Building Safe and Resilient Communities” and “Building Resilient Local Communities in Georgia and Armenia” Projects Coordinators.

8. From 7 to 9 December, 2016, “Project Proposal Writing” training was organized with the aim to strengthen and develop project development, management and implementation capacities of ARCS HQ and regional branches’ staff and volunteers. The training was organized within the framework of “Building Safe and Resilient Communities” and “Building Resilient Local Communities in Georgia and Armenia” Projects

9. 169 target schools have received fire protection equipment and education/ awareness raising materials.

## “Building Safe and Resilient Communities” Project II phase

II Phase of “Building Safe and Resilient Communities” has started in December 2015 and will continue till November 2018.

In February 2016, 4 new communities has been selected during the meeting organized in Lori regional municipality with participation of Deputy Governor, as well as representatives from relevant departments of regional municipality, Head of Regional Rescue Service have participated at the meeting. In Yerevan, 4 new schools have been also selected.

In May 2016, training for CVGs from Mets Parni, Odzun, Sarchapet and Margahovit communities was organized. Topics included Disaster Risk Management, Basics of Search and Rescue, First Aid, Psychosocial support, Fundamental Principles of RCRC Movement, Communication during disasters, Needs assessment in emergencies /including Sphere standards/, Climate Change and Livelihood protection. Hrachik Antonyan, Head of Lori Regional Rescue Service has taken part with welcoming speech underlying the importance of CVGs in DRR issues on local level.

Moreover, rescue and fire protection equipment have been purchased for new communities and schools. Due to the extreme weather conditions, CVGs from Odzun, Mets Parni and Sarchapet communities have also received equipment for response during winter period in heavy snow conditions and CVGs from the last phase have upgraded their fire protection equipment.

In May 2016, representative from ARCS DM/PM Department have taken part in regional training on “Baseline Study” in Tbilisi, where technical means and methodology for conducting this study was provided. Following the training, Baseline Study was conducted in Darpas, Vahagni, Kurtan, Sarchapet, Mets Parni, Margahovit and Odzun communities of Lori region.

Դարպաս, Վահագնի, Կուրթան, Սարչապետ, Մեծ Պառնի, Մարգահովիտ և Օձուն համայնքներում իրականացված ելակետային ուսումնասիրությունը:

Հունիս և հուլիս ամիսներին, Ստեփանավան քաղաքում, Երևանի նոր ընտրված թիրախային 16 դպրոցների և Լոռու մարզի 13 թիրախային դպրոցների 150 ուսուցիչների համար կազմակերպվեց հրահանգչային դասընթաց՝ բնական և մարդածին աղետների, վարքականոնների, ռիսկերի և վտանգների, դպրոցներում քաղպաշտպանության հիմունքների, աշակերտների հետ աշխատանքի մեթոդաբանության, խաղերի և մրցույթների կիրառման և այլ թեմաներով:

Սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին Ստեփանավանում կազմակերպվեց հրահանգչային դասընթաց ծրագրի առաջին փուլում ընդգրկված Երևանի և Լոռու մարզի, թվով 28 դպրոցների 150 ուսուցիչների համար:

Արդյունքում, դասընթացների մասնակից ուսուցիչները կազմակերպեցին ԱՌՆ և ԱՕ թեմաներով դասընթացներ 1-9 դասարանի աշակերտների համար:

Ավելին, Լոռու մարզի 25 շահառու դպրոցներին ինչպես նաև Երևան քաղաքի 32 շահառու դպրոցներին տրամադրվեց հակահրդեհային գույք, գրենական պիտույքներ և ուսուցողական/ իրազեկման բարձրացման նյութեր:

Հոտեմբերի 13-ին Լոռու մարզի Վանաձոր և Ստեփանավան քաղաքներում կազմակերպվեց ուսումնավարժանք, որին մասնակցում էին մարզում գործող բոլոր ՀԿԹ-երը: Վարժանքի արդյունքում նրանք գործնականում կիրառեցին դասընթացների ժամանակ ստացած գիտելիքը ավտովթարներին արձագանքելու, գետանց իրականացնելու, տուժածներին տեղափոխելու և առաջին օգնություն տրամադրելու վերաբերյալ:

«Աղետները երեխաների աչքերով» խորագրով նկարչական մրցույթը կազմակերպվեց շահառու 57 դպրոցներում: Յուրաքանչյուր դպրոցից ընտրվեց 10 լավագույն աշխատանք, որոնց հեղինակ աշակերտները պարգևատրվեցին մրցանակներով: Ավելին, յուրաքանչյուր դպրոցից ընտրվեց 3 լավագույն աշխատանք, որոնցով կազմվեց 2017թ. սեղանի օրացույց:

Կարևոր է ընդգծել նաև Ղրղզստանում կազմակերպված ԿԽ/ԿՄ տարածաշրջանային ֆորումին ծրագրի համակարգողի մասնակցությունը, որի ընթացքում քննարկվեցին Հարավային Կովկասում և Միջին Ասիայում ԱՌՆ ոլորտում ձեռք բերված փորձը և քաղած դասերը:

Ծրագրի շրջանակներում հնարավորություն ընձեռնվեց նաև մասնակցություն ունենալ ս.թ. նոյեմբերի 29-ից դեկտեմբերի 2-ը Թբիլիսիում կազմակերպված Սենդայի տարածաշրջանայի նաշխատանքային հանդիպմանը: Միջոցառմանը մասնակցող հայկական պատվիրակությունը կազմված էր Արտակարգ իրավիճակների նախարարության չորս աշխատակիցներից, ԱՌՆ Ազգային պլատֆորմի ներկայացուցչից, «Կառուցենք անվտանգ և կայուն համայնքներ» և «Կառուցենք դիմակայուն տեղական համայնքներ Վրաստանում և Հայաստանում» ծրագրերի համակարգողներից:

ՀԿԽԸ ինչպես ԿԳ այնպես էլ մասնաճյուղերի աշխատակիցների և կամավորների, ծրագրերի մշակման, ղեկավարման և իրականացման կարողությունները ամրապնդելու և զարգացնելու նպատակով, դեկտեմբերի 7-ից 9-ը կազմակերպվեց «Ծրագրի առաջարկությունների մշակում» խորագրով դասընթաց «Կառուցենք անվտանգ և կայուն համայնքներ» և «Կառուցենք դիմակայուն տեղական համայնքներ Վրաստանում և Հայաստանում» ծրագրերի շրջանակներում:

In June and July ToT training on natural and man-made disasters, risk and hazards, basics of civil protection in schools, methodology of working with pupil, applicability of games and competitions and other topics for 150 teachers from 16 newly selected schools of Yerevan and 13 newly selected schools from Lori region was organized in Stepanavan city.

In September and October, trainings for 150 teachers from 28 schools of Yerevan and Lori region engaged in the first stages of the Project was organized. As a result, trained teachers have organized trainings for pupils from 1-9 classes on DRR and First Aid.

Moreover, 25 beneficiary schools of Lori region as well as 16 newly selected schools and 16 old target schools from Yerevan have been provided with fire Protection equipment, stationary and educational/ awareness raising materials.

Simulation exercises have been conducted in Vanadzor and Stepanavan cities on 13th of October where all CVGs from the region have taken part. As a result CVGs have practically applied the knowledge and capacities in responding to car accident, crossing the river and providing FA to injured gained during trainings.

"Disasters with eyes of children" drawing competition was organized in target 56 schools. 10 best drawings have been selected from each school and authors have been awarded with incentive prizes. Moreover, three best drawings from each school have been also selected and placed in 2017 calendar.

It is also important to indicate participation of Project Coordinator in RCRC regional Forum in Kyrgizstan, during which DRR experience in South Caucasus and Central Asia and lessons learnt have been discussed.

Within the framework of the Project there was also an opportunity to participate on Sendai regional workshop organized from November 29 to December 2 in Tbilisi. Armenian delegation taken part at the workshop included 4 representatives from the Ministry of Emergency Situations, a representative from DRR National Platform, "Building Safe and Resilient Communities" and "Building Resilient Local Communities in Georgia and Armenia" Projects Coordinators.

From 7 to 9 December, 2016, "Project Proposal Writing" training was organized with the aim to strengthen and develop project development, management and implementation capacities of ARCS HQ and regional branches' staff and volunteers. The training was organized within the framework of "Building Safe and Resilient Communities" and "Building Resilient Local Communities in Georgia and Armenia" Projects.


"CLIMATE FORUM EAST II"
Regional Project


ARMENIAN RED
CROSS SOCIETY
АРМЯНСКОЕ ОБЩЕСТВО
КРАСНОГО КРЕСТА

## «Սիրիահայերի ինտեգրման խթանում» ծրագիր

Սիրիահայերի ինտեգրման խթանում ծրագիրն իրականացվում է 2015 թվականի մարտից և նպատակ ունի խթանելու սիրիահայերի սոցիալ-մշակութային և տնտեսական ինտեգրումը: Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության և Ավստրական Կարմիր խաչի ընկերության կողմից: Այն իրականացվում է Երևանում և ՀՀ Արարատի, Արմավիրի, Արագածոտնի, Կոտայքի, Լոռու, Շիրակի մարզերում:

2016թ. ծրագրի շրջանակներում իրականացվել է.

- Խորհրդատվություն աշխատաշուկայի ընթացակարգերի վերաբերյալ, որը կրում է շարունակական բնույթ:
- Ստեղծվել է աշխատանք փնտրող սիրիահայերի պրոֆիլների էլեկտրոնային բազա, որը տեղ է գտել նոր ծրագրավորված job-syrinarmenians.am կայքում:
- Երևանում և թիրախ մարզերում «Մեդիա նախաձեռնությունների կենտրոն»-ի հետ համատեղ կազմակերպվել են «Մեդիայի դերը սիրիահայերի ինտեգրման գործում» թեմայով դասընթացներ զանգվածային լրատվամիջոցների և հասարակական կազմակերպությունների 140 ներկայացուցչի համար:
- Կազմակերպվել են լեզվի և մասնագիտական դասընթացներ, որոնց մասնակցել է 167 սիրիահայ:
- 70 սիրիահայ՝ որպես աջակցություն են ստացել սարքավորումներ/գործիքներ Հայաստանում իրենց բիզնեսը հիմնելու կամ զարգացնելու նպատակով:
- Ծրագրի թիրախ 6 մարզերում՝Արագածոտն, Արմավիր, Արարատ, Կոտայք, Շիրակ և Լոռի, իրականացվել են 2 համակարգման հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկվել են սիրիահայերի հետ կապված ընթացիկ խնդիրները:
- Հասարակությունում և կրթական միջավայրում սիրիահայ աշակերտների ներառման գործընթացին աջակցելու նպատակով ծրագրի մարզային դպրոցներում կազմակերպվել են ֆիլմի դիտում-քննարկումներ (երևանյան դպրոցներում նույն քննարկումները կազմակերպվել են 2015-ի վերջին), որոնց ընթացքում աշակերտների կողմից բարձրացվել և քննարկվել են խտրականության հետ կապված դեպքեր և լուծման ուղիներ:
- Փետրվար ամսվա ընթացքում Ծաղկաձորում երկօրյա սեմինարներ են կազմակերպվել ծրագրի թիրախային դպրոցների բարձր դասարանների աշակերտների համար, որոնց ընթացքում քննարկվել են հարցեր կապված կրթական գործընթացների և ռազմավարության, կրթության իրավունքի մասին, ինչպես նաև կազմակերպվել են ինտերակտիվ խաղեր՝ օգնելու մասնակիցներին հասկանալու, թե ինչ է զգում մարդը երբ մերժվում է մեծամասնության կողմից, ինչ է խտրականությունը, խտրականության ենթարկվող մարդու զգացողությունները, մարդկանց որոշ խմբերի նկատմամբ կարծրատիպերը և այլն: Սեմինարներին մասնակցել է 155 մարդ՝ թիրախային 49 դպրոցից:
- Ապրիլի սկզբից ինտերակտիվ խաղեր են կազմակերպվել թիրախային բոլոր դպրոցների տարբեր դասարաններում, որոնք վարել են վերապատրաստված ուսուցիչները, աշակերտները և Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանից ծրագրում ընդգրկված կամավորները:
- Ապրիլի ընթացքում շարադրության մրցույթ է կազմակերպվել ծրագրի բոլոր թիրախային դպրոցներում «Խտրականությունից դուրս հասարակությունը, որում ուզում եմ ապրել» թեմայով: Յուրաքանչյուր դպրոցից չորսական հաղթող աշակերտի տրամադրվել են մրցանակներ:
- Հունիսի 6-ից 10-ն ընկած ժամանակահատվածում կրթական-մշակութային

## "Promoting Integration of Syrian Armenians" Project

Promoting Integration of Syrian-Armenians» project is being implemented from March 2015. The aim of the Project is to promote social-cultural and economic integration of Syrian-Armenians. The Project is funded by the European Union and the Austrian Red Cross. It is implemented in Yerevan and Shirak, Lori, Kotayk, Aragatsotn, Ararat, Armavir regions of the RA.

Within the frame of the project the following activities have been carried out during 2016;

- Consultations related to labor market procedures, which is a continuous process.
- An electronic database for Syrian Armenian jobseekers was created, which was placed in newly created job-syrinarmenians.am website.
- Trainings for Mass Media and NGOs titled "Role of the Media in the process of integration of Syrian Armenians" were organized in Yerevan and targeted regions, jointly with Media Initiatives Center.
- Were organized vocational and language trainings to which participated 167 Syrian Armenians.
- 70 Syrian Armenians have been supported with equipment/tools for starting or developing their businesses in Armenia.
- 2 regional coordination meetings for 6 project target regions were held in Aragatsotn, Armavir, Aratat, Kotayk, Shirak and Lori regions, during which the current issues of Syrian Armenians were discussed.
- With the aim of supporting Syrian Armenian children integration into the society and educational system, film showing-discussions were organized in the regional target schools (The same was organized in Yerevan at the end of 2015). The cases of discrimination were raised by children and discussed with them..
- In February 2-days outreach seminars were organized for the pupils from high classes of the Project target schools in Tsaghkadzor. Topics concerning educational procedures and strategy, rights of education and in education were discussed, as well as interactive games helping to understand what a person feels when he is disposed of by the majority, what is discrimination, what a human feels when he is discriminated, people's stereotypes against certain groups etc. have been included to the agenda. Total of 155 people from 49 target schools (from Yerevan and regions) participated to the seminars.
- From the beginning of April the interactive games were organized in all target schools by trained teachers, pupils and/or volunteers from the Armenian State Pedagogical University After Kh.Abovyan.
- In April the essay competition was organized in all 57 target schools within pupils of the high classes on theme "What is Discrimination Free Society, where I Want to Live". Prizes in 4 nominations were awarded to the winners from each target school.
- From June 6-10, educational-historical visits were organized for



այցեր են կազմակերպվել Սաղմոսավանք – Օհանավանք - Սբ.Կարմրավոր - Սբ. Ծիրանավոր - Սբ. Սպիտակավոր՝ սիրիահայ աշակերտներին Հայաստանի պատմությանն ու մշակույթին առավել լավ ծանոթացնելու նպատակով: Այցելությունների ընթացքում անհրաժեշտ տեղեկատվությունը տրամադրել են ծրագրի զբոսաշրջավարի մասնագիտությամբ կամավորները:

• Հունիսի 5-ին ծրագրի աշխատակազմը մասնակցել է Եվրոպայի օրվան նվիրված տեղեկատվական ցուցահանդեսին, որի ընթացքում անցորդներին է տրամադրել ծրագրի ընթացքում մշակված տեղեկատվական նյութերը: Ավելին, սիրիահայ և հայաստանցի աշակերտների մասնակցությամբ անցկացվել է նաև ֆլեշմոբ, որին միացել է նաև հանդիսատեսը:

• Հունիսի 13-ից 19-ը Ստեփանավանի Լոռի հանգստյան տանը սիրիահայ աշակերտների համար կազմակերպվել է ամառային ճամբար, որին մասնակցել են նաև ծրագրի կամավորները (20 մարդ): Հաշվի առնելով սիրիահայ աշակերտների կարիքները՝ օրակարգում ընդգրկվել են թեմաներ, ինչպիսիք են՝ հաղորդակցման հմտություններ, կոնֆլիկտների և ժամանակի կառավարում, ինչպես նաև կազմակերպվել են առաջին օգնության և աղետների ռիսկի նվազեցման դասընթացներ՝ բարձրացնելու սիրիահայ աշակերտների իրազեկությունը՝ աղետի կամ պատահարի ժամանակ ճիշտ վարքագիծ դրսևորելու նպատակով: Մասնակիցերը կազմակերպել են նաև մշակութային միջոցառումներ, որոնք հնարավորություն են տվել նրանց ձեռք բերելու ընկերներ ու շփվելու կամավորների հետ ավելի ազատ:

• Հոկտեմբեր ամսվա ընթացքում ծրագրի թիրախային դպրոցներում կազմակերպվել է նկարչական մրցույթ «Իմ Հայաստանը» թեմայով, որին մասնակցել է 4470 աշակերտ: Հաղթողները պարգևատրվել են խրախուսական մրցանակներով, իսկ յուրաքանչյուր դպրոցից մեկական լավագույն նկար ուղարկվել է տպագրատուն՝ 2017 թվականի օրացույցում տպագրելու համար՝ ծրագրի գործընկերներին և շահագրգիռ կողմերին տրամադրելու նպատակով:

• Սիրիահայերի ծնողների համար կազմակերպվել են վերապատրաստումներ՝ ներկայացնելու հայաստանյան կրթական ընթացակարգերը, ծրագրերն ու իրականացվող քաղաքականությունը: Միաժամանակ խորհրդատվություններ են տրամադրվել կապված միջին և բարձրագույն մասնագիտական կրթության համակարգի, իրենց երեխաների հետագա ուսման և կարիերայի հնարավորությունների, հնարավոր ֆոնդերի հաթայթման և այլ հարցերի մասին:

• Մեկ ուսումնական տարվա համար անհրաժեշտ գրենական պարագաների փաթեթներ են տրամադրվել բոլոր սիրիահայ աշակերտներին:

## «Ձմեռային աջակցություն Հայաստանում գտնվող սիրիահայերին» ծրագիր

Ազգային ընկերությունը, առաջնորդվելով իր մարդասիրական առաքելությամբ, 2016թ-ին ևս շարունակել է իրականացնել ծրագրեր՝ ուղղված Սիրիայի քաղաքացիական պատերազմի հետևանքով Հայաստան տեղափոխված սիրիահայերի կենսապայմանների բարելավմանը: Ավստրիական և Շվեցարական Կարմիր խաչի ընկերությունների և «Նեյբր ին նիդ» Ավստրիական հիմնադրամի ֆինանսավորմամբ իրականացված «Ձմեռային աջակցություն Հայաստանում գտնվող սիրիահայերին» ծրագրի շրջանակներում 200 սիրիահայ շահառու ընտանիքի՝շուրջ 840 մարդու, տրամադրվեցին վեց ամսվա համար նախատեսված հիգիենիկ պարագաների և սննդի կապոցներ, 182 ընտանիք

437 Syrian Armenian school students to Saghmosavanq-Ohanavanq-St.Karmravor-St.Tsiranavor-St.Spitakavor. The aim of the visits was to provide opportunities to Syrian Armenian students to become well acquainted with Armenia's history and culture.

• The project's volunteers who are professionals in Guiding and Tourism participated in the visits and provided the appropriate and necessary information.

• On June 5 the project staff participated in an Information Fair dedicated to Europe Day, organized by EU in Northern Avenue, where all the materials printed within the project were distributed within visitors. Moreover, a flash mob was carried out with participation of Syrian-Armenian schoolchildren, in which joined citizens as well.

• From June 13 to 19, a summer school was organized for 100 Syrian Armenian children in Lori region, Stepanavan, with an active participation of the ARCS volunteers (20 people). Considering the needs of Syrian-Armenian children, the agenda was very comprehensive and dynamic: topics about communication skills, conflict management and time management were discussed and interactive games were organized based on the themes. Moreover, sessions on First Aid and Disaster Risk Management were carried out in order to raise the awareness of Syrian Armenian children on how to react in case of any emergency. Furthermore, every evening, the children took part in cultural events. They came up with dances, songs, poems, which was a great opportunity for them to closely communicate with the volunteers and make new friends.

• In October the drawing competition was organized in all target schools of Yerevan and regions on theme "My Armenia". 4470 schoolchildren participated to the competition and the winners were awarded with prizes. The best pictures of the competition were sent to the publishing house for designing and printing calendar for 2017. It is planned to distribute the calendars within the project partners and stakeholders.

• The advocacy trainings for parents were organized related to educational procedures, programs, problems and gaps. Consultancy on Vocational and high education, future educational opportunities and careers of their children, rights of education, the ways of finding funds for education etc. has been provided.

• The necessary stationary for Syrian-Armenian schoolchildren was distributed within Syrian Armenians. As their parents mentioned during the seminars, the provided stationary was fully covered all their needs for the whole year and help them not to pay money for stationary.

## "Winterization support for Syrian refugees in Armenia" Project

Being led by its humanitarian mission, in 2016 NS continued to implement a project aimed to enhance livelihood conditions of Syrian Armenians who moved to Armenia because of civil war in Syria.In the


ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԹԻՄ

ստացել է կենցաղային պարագաներ (յուրաքանչյուր ընտանիքին մեկ կապոց), ինչպես նաև քրոնիկ հիվանդություն (ասթմա, շաքարախտ, արյան ճնշում, սրտի հետ կապված խնդիրներ և այլն) ունեցող 47 շահառու ստացել է մեկ և կես ամսվա համար նախատեսված դեղորայք: Հարկ է նշել, որ Ավստրիական և Շվեցարական Կարմիր խաչի ընկերությունների հավելյալ ֆինանսավորման շնորհիվ հնարավոր դարձավ 2016թ.-ին Սիրիայից Հայաստան տեղափոխված 110 ընտանիքի`շուրջ 374 մարդու, տրամադրել երեք ամսվա համար նախատեսված հիգիենիկ պարագաների և սննդի կապոցներ: Ծրագիրն իրականացվել է ՀՀ սփյուռքի նախարարության և «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ի հետ համագործակցելով:

## «Կլիմայի արևելյան հարթակ II» ծրագիր

2015 թ. հունվարից Հայկական Կարմիր խաչի ընկերությունը Եվրամիության, Ավստրիական զարգացման գործակալության և Ավստրիական Կարմիր խաչի համաֆինանսավորմամբ իրականացնում է «Կլիմայի արևելյան հարթակ II» ծրագիրը, որի հիմնական նպատակն է նպաստել ներքին քաղաքականությունում քաղաքացիական հասարակության մասնակցությանը և քաղաքացիական ներգրավմանը Արևելյան հարևանության տարածաշրջանում:

Հաշվետու ժամանակաշրջանում «Կլիմայի հայկական հարթակ»-ի անդամ կազմակերպությունների համար Ավստրիական Կարմիր խաչի աջակցությամբ հայտարարվեցին ենթադրամաշնորհային ծրագրեր:

«Կոալիցիաների ստեղծում և Ցանցի գործունեություններ» խորագրով ենթադրամաշնորհային ծրագրի իրականացման արդյունքում մշակվեցին «Կլիմայի հայկական հարթակ» - ի ֆոնդահայթահայթման և 2017 – 2019թթ. Գործունեության զարգացման ռազմավարությունները և կազմակերպվեցին ռեսուրսների մոբիլիզացման, առաջնորդության և հաղորդակցության թեմաներով դասընթացներ:

«Տեղական մակարդակում Կլիմայի փոփոխության հարմարվողականության գործողությունների պլանի մշակում» ենթադրամաշնորհային ծրագրի իրականացման արդյունքում մշակվեցին Շիրակի մարզի Բասեն համայնքի և Լոռու մարզի Մեծ Պառնի ու Մարգահովիտ համայնքների համար կլիմայի փոփոխության հարմարվողականության գործողությունների պլանները: Դրանց հաջորդեց «Փոքր հարմարվողական ծրագրերի իրականացում» դրամաշնորհը, որի նպատակն էր վերը նշված համայնքներում իրականացնել վեց փոքր ծրագրեր: Ներկայումս աշխատանքներն իրականացվում են երեք հիմնական ուղղություններով.

1. ՀՀ Լոռու մարզի Մարգահովիտ համայնքում իրականացվում են.
- Ֆոտովոլտային համակարգի տեղադրում համայնքի մանկապարտեզի տանիքում՝ որպես էլեկտրաէներգիայի այլընտրանքային աղբյուր,
- համայնքի փողոցների լուսավորության ապահովում՝ էներգախնայող լամպերով:

2. ՀՀ Լոռու մարզի Մեծ Պառնի համայնքում իրականացվում են.
- Ֆոտովոլտային համակարգի՝ որպես էլեկտրաէներգիայի ստացման այլընտրանքային աղբյուր և էներգախնայող լամպերի տեղադրում՝ համայնքի փողոցների լուսավորության ապահովում,

framework of “Winterization support for Syrian refugees in Armenia” project, financed by Austrian and Swiss Red Cross Societies and Austrian “Neighbor in need” foundation, 200 Syrian Armenian families, that is 840 people, were provided with hygiene and food parcels for six months, 182 family received household items (each family one parcel), as well as project beneficiary 47 people having chronic diseases (e.g asthma, diabetes, blood pressure, heart problems etc.) have been provided with medication for 1,5 months.It is worth mentioning that with additional finance from Austrian and Swiss Red Cross Societies it became possible to provide 110 newcomer families, that is 374 people, with hygiene and food parcels for three months. The project has been implemented close cooperation with RA Ministry of Diaspora and “Center for Coordination of Syrian Armenians’ issues” NGO.

## “Climate Forum East II” Project

Starting from 2015, the Armenian Red Cross Society has been implementing “Climate Forum East II” Project co-funded by the European Union, Austrian Development Cooperation and Austrian Red Cross. The overall objective of the Project is to contribute to Civil Society´s participation in domestic policies and civic engagement in the Eastern Neighborhood Region.

During the reporting period, grants have been provided to the Armenian Climate Forum member organizations with the support of Austrian red Cross.

As a result of implemented “Coalition building and Network activities” sub-granted Project, Fundraising strategy and 2017 – 2019 Network Development Strategies for Armenian Cliamte Forum have been developed and trainings on Resource mobilization, Leadership and Communication have been conducted.

As a result of implemented “Development of Local Climate Change Adaptation Plan of Action” sub-granted Project, Climate change Action plans for Basen community of Shirak region and Mets Parni and Margahovit communities of Lori region have been developed. They followed by “Implementation of Small scale adaptation projects” sub-granted Project which aimed at implementing six small scale projects in the above mentioned communities. Currently, activities are implemented in the following three main directions:

1. In Margahovit community of Lori region of the RA:
- Installation of a photovoltaic system (as an alternative source for energy) on the roof of the community kinder garden,
- Street illumination – installation of energy- saving lamps.

2. In Mets Parni community of Lori region of RA:
- Installation of a photovoltaic system, as an alternative source for

- Դեգրադացված և էրոզացված հողատարածքների վերականգնում:

3. ՀՀ Շիրակի մարզի Բասեն համայնքում իրականացվում են.
- Խմելու ջրի վարակազերծման (քլորացում) համակարգի կառուցում,
- Խմելու ջրատարի ռիսկային և հեղեղավտանգ հատվածի վերակառուցում:

«Նպատակային ուսումնասիրությունների նախապատրաստում և մշակում» ենթադրամաշնորհային ծրագրի իրականացման արդյունքում մշակվում են երեք նպատակային ուսումնասիրություններ՝ վերը նշված համայնքներում իրականացված փոքր ծրագրերի վերաբերյալ՝ ներառելով լավագույն փորձը և քաղած դասերը:

«Կլիմայի փոփոխության և առողջապահության ոլորտների քաղաքականությունների վերլուծություն» ենթադրամաշնորհային ծրագրի իրականացման արդյունքում մշակվեց կլիմայի փոփոխության և առողջապահության ոլորտների օրենսդրական դաշտի ամփոփ վերլուծություն, որը հիմք կհանդիսանա 2017 թ. «Կլիմայի փոփոխության և առողջապահության վերաբերյալ մեդիաարշավի իրականացում ազգային մակարդակում» խորագրով ենթադրամաշնորհային ծրագրի համար:

«Նյութերի նախապատրաստում ազգային երկխոսության, բնակչության իրազեկման բարձրացման և կրթական ոլորտներում՝ որպես թիրախ համարելով դպրոցները և երիտասարդներիին» խորագրով ենթադրամաշնորհային ծրագրի իրականացման արդյունքում մշակվեցին «Պահպանենք մեր մոլորակի կլիման» համակարգչային ուսուցողական խաղը և պաստառը, ինչպես նաև «15 պատասխան կլիմայական թերահավատի կարծիքներին» նյութը, որոնց շնորհիվ իրականցվում են իրազեկման բարձրացմանն ուղղված գործողություններ՝ «Բնակչության իրազեկման բարձրացմանն ուղղված գործողությունների իրականացում՝ որպես թիրախ համարելով դպրոցները և երիտասարդներին» խորագրով տրամադրված ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակներում:

## Հայաստան. սողանք

Ս.թ. հունիսի 24-ին, հորդառատ անձրևների և կարկուտի հետևանքով առաջացած սողանքի պատճառով լուրջ վնասներ են կրել Գեղարքունիքի մարզի Կարճաղբյուր համայնքը և Շիրակի մարզի Արթիկ քաղաքը: Արդյունքում հեղեղվել են բնակելի տներ, օժանդակ շինություններ, փողոցներ և կամուրջներ, տեղի է ունեցել գյուղատնտեսական կենդանիների անկում և վնաս է հասցվել մշակաբույսերի ցանքատարածություններին:

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը (ՀԿԽԸ), հետևելով իր մարդասիրական առաքելությանը և ելնելով Կարմիր խաչի միջազգային շարժման հիմնարար սկզբունքներից, աղետի հասցրած վնասները մեղմելու նպատակով մարդասիրական օգնություն տրամադրելու համար իրականացրել էր կարիքների գնահատում և դիմել Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի Արտակարգ իրավիճակներին արձագանքման հիմնադրամին:

Ծրագրում ներգրավված ՀԿԽԸ աշխատակազմը մշակեց շահառուների ընտրության չափորոշիչները և ցուցակը: Հետագայում ցուցակը խաչաձև ստուգվեց համապատասխան շահագրգիռ կողմերի հետ՝ այն ավելի արդյունավետ դարձնելու և սխալ տեղեկությունները բացահայտելու նպատակով:

Օգոստոսի 9-ին և 10-ին ՀԿԽԸ-ն մարդասիրական օգնությունը բաշխեց

energy, and installation of energy- saving lamps – community streets illumination.
- Rehabilitation of degraded land and erosion lands.

3. In Basen community of Shirak region of RA:
- Construction of drinking water disinfection (chlorination) system,
- Recovering of drinking water risky and damaged section.

As a result of implementing „Development of Case Studies“ sub-granted Project, three case studies on implemnted small scale Projects in the above mentioned communities will be developed, including best practices and lessons learnt.

As a result of implementing „Climate Change and Health Policy Analysis“ sub-granted Project, Climate Change and Health related legislation have been briefly analysed which served as a basis for „National Media Campaign related to Climate Change and Public Health“ sub-granted Project to be started in 2017.

As a result of implemented «Preparation of materials for National policy dialogue, public awareness raising and education targetting scholls and young people“ sub-granted Project, „Save our Planet Climate“ computer game and poster as well as „15 answers to opiinon of climate sceptics“ material have been developed which have been using within the framework of „Conducting awareness raising activities targetting schools and young people“ sub-granted Project.

## Armenia: Landslide

On 24 June, 2016 landslide occurred as a result of heavy rains and hail has caused serious damages to Karchaghbyur community of Gegharquniq region and Artik city of Shirak region.  As a result houses, supplementary building, streets and bridges have been damaged, livestock was sawn areas have been destroyed.

Armenain Red Cross Society (ARCS) following its humanitarian mission and based on the fundamental principles of Red Cross and Red Crescent Movement, in order to mitigate damages caused by the disaster by providing humanitarian assistance has conducted need assessment and applied to the IFRC Disaster Relief Emergency Fund (DREF).

ARCS staff engaged in the operation has developed beneficiary selection criteria and beneficiary list. Afterwards the list was crosschecked with the relevant stakeholders in order make it more effective and to avoid misinformation.

On August 9 and 10 ARCS has distributed humanitarian relief inKarchaghbyur community of Gegharquniq region and Artik city of Shirak region. 120 families from Karchaghbyur community and 12 families from Artik city have received food and hygiene parcels and cash.

Գեղարքունիքի մարզի Կարճաղբյուր համայնքում և Շիրակի մարզի Արթիկ քաղաքում։

Կարճաղբյուր համայնքում սննդի և հիգիենիկ պարագաների փաթեթներ և կանխիկ գումար ստացան 120 ընտանիք, իսկ Արթիկում՝ 12 ընտանիք։

Գործունեության առնչվող տեղեկությունները տեղադրվել են առցանց լրատվամիջոցներում, թերթերում և ՀԿԽԸ կայքում։

## «Ականների, չպայթած զինամթերքի վերաբերյալ ռիսկերի և հիմնական վարքականոնների լուսաբանում հակամարտության սրման պայմաններում Տավուշի մարզի սահմանային համայնքներում» ծրագիր

2015թ. Տավուշի մարզում իրականացված սահմանային համայնքներում հակամարտության սրման պայմաններում Ականների, չպայթած զինամթերքի ռիսկերի և հիմնական վարքականոնների վերաբերյալ իրազեկման բարձրացմանն ուղղված գործունեության արդյունավետ իրականացման արդյունքում ծրագիրը շարունակվեց 2016թ. հունիս – հոկտեմբեր ամիսներին ներգրավելով Իջևանի, Նոյեմբերյանի և Բերդի 17 սահմանային Բերքաբեր, Ներքին Ծաղկավան, Սևքար, Վազաշեն, Այգեհովիտ, Մովսես, Չինարի, Ներքին Կարմիր Աղբյուր, Պառավաքար, Այգեպար, Բարեկամավան, Կոթի, Ոսկևան, Ոսկեպար, Բաղանիս, Դովեղ և Բերդավան համայնքները։

Այսպիսով, հաշվետու ժամանակաշրջանում, ՀԿԽԸ Բերդի համայնքային մասնաճյուղը կազմակերպեց 6 դասընթաց վերը նշված թեմայի շուրջ ընտրված 5 համայնքների (Պառավաքար, Չինարի, Մովսես, Ներքին Կարմիր Աղբյուր և Այգեպար) դպրոցներում և մանկապարտեզում ներգրավելով ավելի քան 500 աշակերտ և մոտ 130 ուսուցիչ և դաստիարակ։ Ավելին, մասնակից աշակերտների ծնողները և համայնքի բնակչությունը նույնպես մասնակցեցին դասընթացներին։ Հարկ է նշել, որ համայնքի բնակչությունը առաջնային տեղ է տալիս ականների և չպայթած զինամթերքի վերաբերյալ տեղեկատվության կարևորությանը՝ հատկապես սահմանային համայնքների համար։

Նույն ժամանակաժրջանում, ՀԿԽԸ Նոյեմբերյանի համայնքային մասնաճյուղը կազմակերպեց դասընթացներ 7 համայնքներում (Բարեկամավան, Կոթի, Ոսկևան, Ոոսկևպար, Բաղանիս, Դովեղ և Բերդավան)՝ ներգրավելով ավելի քան 800 աշակերտի, 180 ուսուցչի և մանկապարտեզի աշխատակազմի ներակյացուցչի։

Վերջապես, ՀԿԽԸ Իջևանի մարզային մասնաճյուղը կազմակերպեց տեղեկատվական դասընթաց 5 համայնքներում (Այգեհովիտ, Վազաշեն, Սևքար, Բերքաբեր և Ներքին Ծաղկավան) երկու փուլով՝ ներգրավելով 800 աշակերտ դպրոցներից և համայնքապետարանի ու մանկապարտեզի աշխատակազմի ներկայացուցիչներ։

During the implementation of the Project, visibility of ARCS activities have been ensured through wearing jackets, using IFRC and ARCS logos on the boxes. All information related to the operation have been posted in online media and ARCS website.

## “Dissemination of Danger of Mines, Unexploded Ordnances and Basic Behaviour Rules during Escalations of Violence in Conflict-Affected Communities of Tavush Region” Project

As a result of successful implementation of awareness raising activities on Mine education, Unexploded Ordnances and Basic Behaviour Rules during Escalations of Violence in Conflict in Tavush region last year, the Project has been continued during June – October period of 2016, eingaging 17 borderline communities of Ijevan, Noyemberyan and Berd, namely Berkaber, Nerkin Tsakhkavan, Sevkar, Vazashen, Aygehovit, Movses Chinari, Nerkin Karmir Aghbyur, Paravakar, Aygepar, Barekamavan, Koti, Voskevan, Voskepar, Baghanis, Dovegh and Berdavan communities.

Thus, during the reporting period, ARCS Berd regional branch has organized 6 sessions on above mentioned topic in community schools and kindergarten in selected five communities (Paravakar, Chinari, Movses, Nerkin Karmir Aghbyur and Aygepar) involving more than 500 pupils and around 130 teachers and nurses. Moreover, local citizens and parents whose kids have been studying at the selected schools have also taken part in the sessions. It is worth to note that the local population has highly prioritized the importance of information over mines and unexploded ordinances particularly for the border communities.

During the same period, ARCS Noyemberyan branch has conducted information sessions in seven communities (Barekamavan, Koti, Voskevan, Voskepar, Baghanis, Dovegh and Bardavan) engaging more than 800 pupils and 180 teachers and staff from the schools and kindergartens.

Finally, ARCS Ijevan branch has conducted information sessions in five communities (Aygehovit, Vazashen, Sevkar, Berkaber and Nerqin Tsakhkavan) in two stages engaging 800 pupils and staff from schools community halls and kindergartens.

It is also worth to note that during the whole implementation period, coordination and communication was kept between ARCS HQ and ARCS Tavush regional branch and between ARCS DP/PM Department and ICRC Armenia Delegation Protection Department to ensure effective implementation of the Project.


UNHCR

# ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՇԱՐԺ

**Հայկական Կարմիր խաչի ընկերությունը /ՀԿԽԸ/ Բնակչության տեղաշարժի /ԲՏ/ ուղղության շրջանակներում իրականացնում է ՀՀ-ում ապաստան հայցողներին և փախստականներին առաջնային մարդասիրական, սոցիալ-հոգեբանական աջակցություն և խորհրդատվության տրամադրում, սահմանային վերահսկողության իրականացում, փախստականների մեծածավալ ներհոսքի դեպքում՝ վաղ ազդարարման համակարգի ստեղծում, փախստականների ինտեգրմանը նպաստող գործունեության ծավալում:**

## «Հայաստանում փախստականների ընդունելության բարելավում և մտահոգության առարկա հանդիսացող անձանց ինտեգրման խթանում» ՄԱԿ ՓԳՀ կողմից ֆինանսավորվող ծրագիր

Արդեն շուրջ 14 տարի է, ինչ Հայկական Կարմիր խաչի ընկերությունը հանդիսանում է ՄԱԿ ՓԳՀ լավագույն գործընկերներից մեկը՝ փախստականների և տեղահանված անձանց օժանդակության ոլորտում: Ամեն տարի նոր մարտավարությունների վրա հիմնված ծրագրերի իրականացումը թույլ է տալիս ավելի նպատակային և օպերատիվ արձագանքել մտահոգության առարկա հանդիսացող մարդկանց կարիքներին:

2016թ. ընթացքում նշված ծրագրի շրջանակներում նպատակ է դրվել բարելավել փախստականների ընդունելությունը, նպաստել նրանց տնտեսական ինքնաբավությանը և տեղական ինտեգրմանը, ինչպես նաև իրականացնել Սեռով և գենդերով պայմանավորված բռնությունների կանխարգելմանն ու արձագանքմանն ուղղված գործողություններ:

### Փախստականների ընդունելության բարելավում

Փախստականների ընդունելության բարելավման գործողություններն իրականացվել են մի շարք ուղղություններով: Աշխատանք է տարվել ՀՀ ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի, ինչպես նաև ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության աշխատակիցների հետ նրանց կարողությունների զարգացման ուղղությամբ: Շուրջ 240 սահմանային պաշտոնյա մասնակցել է փախստականներին վերաբերող միջազգային և տեղական իրավունքի, սեռով և գենդերով պայմանավորված բռնությունների, ինչպես նաև վերարտադրողական առողջության, քրոնիկ հիվանդությունների փոխանցման վերաբերյալ վերապատրաստման դասընթացների: Վերապատրաստումների և այլ համագործակցային միջոցառումների արդյունքում 2016թ. ընթացքում ապաստան հայցողների անհատական դեպքերը ճշգրիտ ուղղորդում են ստացել, այդ թվում նաև ՀԿԽԸ, և նրանց ընդունումը կայացել է՝ հիմնված ՀՀ օրենսդրության և միջազգային պարտավորությունների, մասնավորապես չվերադարձելիության սկզբունքի վրա:

# POPULATION MOVEMENT

**The Population Movement direction of the Armenian Red Cross is providing asylum seekers and refugees in RA with basic humanitarian, psychosocial assistance and may by consultation. The direction is also implementing regular border monitoring, establishes an Early Warning System in case of a massive refugee influx and is involved in activities aimed at integration of refugees.**

## “Improving refugee reception and promoting integration of POCs in Armenia” project funded by UNHCR

It’s about 14 years that ARCS considers to be one of the best implementation partner in the sphere of supporting refugees and the displaced people. Annually, new strategies based on the implementation of the projects allow to provide more operative and targeted response to the needs of PoCs.

During 2016 the aim of the project was to improve refugee reception conditions, promote their self-reliance and local integration, as well as to implement the sexual and gender based violence prevention and response activities.

### Improving Refugee reception

Improving refugee reception activities were conducted in several directions. Capacity development activities were carried out for RA NSS border guards, as well as for the representatives of RA passport and Visa department. Over 240 border officials participated in trainings referring to refugee law, sexual and gender based violence, reproductive health, as well as awareness about other chronic diseases . As a result of the trainings, exact referrals were received for the asylum seekers, and their reception was done based on RA legislation and international liabilities, particularly non refoulement principle was applied.

ARCS regional representatives implemented 73 monitoring visits of RA border crossing points /including joint visits with UNHCR/, collected statistical data and monitored the entry process. Monitoring results highly contribute to situation evaluation and activities design by UNHCR.


PRINCESS
Mini Blender
ATLANT
www.atlant.by
PAP

ՀԿԽԸ մարզային և տարածաշրջանային աշխատակիցները ՀՀ ԱԱԾ և ՀՀ ոստիկանության թույլտվությամբ իրականացրել են ամսական 73 մոնիթորինգային այցելություն (այդ թվում նաև՝ ՄԱԿ ՓԳՀ հետ համատեղ) ՀՀ ցամաքային և օդային սահմանակետեր, իրականացրել վիճակագրական ինֆորմացիայի հավաքագրում և դիտարկում: Մոնիթորինգի արդյունքները մեծապես նպաստում են ՄԱԿ ՓԳՀ կողմից ներկա իրավիճակի ճշգրիտ գնահատմանը և հետագա գործընթացների պլանավորմանը:

Ընդունելության պայմանների և ապաստանի ընթացակարգերի բարելավման նպատակով ՀԿԽԸ-ն իր թարգմանիչների միջոցով ապահովել է շուրջ 496 ժամ բանավոր և 325 էջ անվճար թարգմանություն ապաստան հայցողների համար ՀՀ ՏԿԱԻՆ ՄՊԾ հարցազրույցների, տեղեկատվական հանդիպումների, անհատական խորհրդատվությունների, ինչպես նաև հոգեբանական օգնության ժամանակ:

ՀԿԽԸ ծրագրային աշխատակազմը կազմակերպել և վարել է 10 տեղեկատվական հանդիպում և ոչ ֆորմալ զրույց 164 ապաստան հայցողների, փախստականների և այլ մտահոգության առարկա հանդիսացող անձանց հետ: Հանդիպումները նվիրված են եղել նրանց իրավունքների վերաբերյալ իրազեկության բարձրացմանը, ՀԿԽԸ կողմից իրականացվող ծրագրերին, այդ թվում նաև Որոնման ծառայությանը, ՄԱԿ ՓԳՀ կողմից իրականացվող այլ ծրագրերի ներկայացմանը, աշխատանքի իրավունքի և հեղինակային իրավունքի կիրառմանը, "Հատուկ կացարան" ՊՈԱԿ-ի գործունեությանն ու համակեցության կանոններին:

**• Սեռով և գենդերով պայմանավորված բռնությունների կանխարգելմանն ու արձագանքմանն ուղղված գործողություններ**

Սեռով և գենդերով պայմանավորված բռնությունների արձագանքման ապահովման և բարելավման համար 2016թ. սկզբին վերակազմավորվել է ՍԳՊԲ միջկազմակերպչական աշխատանքային խումբը, որի հիմնական գործառույթը տարվա ընթացքում ՍԳՊԲ վերապրածների կարիքների ժամանակին և ճշգրիտ արձագանքումն է՝ հիմնված համալրված ստանդարտ ընթացակարգի վրա:

Սեռով և գենդերով պայմանավորված բռնությունների կանխարգելումն իրականացվել է իրազեկության բարձրացմանն ուղղված միջոցառումների, այդ թվում տարբեր թիրախային խմբերի համար անցկացվող դասընթացների, ոչ ֆորմալ զրույցների, տպագիր նյութերի, ինչպես նաև այլ միջոցառումների միջոցով: Դասընթացներ են իրականացվել ինչպես մտահոգության առարկա հանդիսացող անձանց (4 դասընթաց, 72 մասնակից), պետական մարմինների ներկայացուցիչների (4 դասընթաց, 97 մասնակից), ինչպես նաև ՄԱԿ ՓԳՀ համագործակից կազմակերպությունների ներկայացուցիչների համար (4 դասընթաց, 68 մասնակից): Դասընթացների թեմաները ներառում էին գիտելիքներ սեռով և գենդերով պայմանավորված բռնությունների տեսակների, տարբեր երկրներում տարածվածության, դրանց ճանաչմանն ուղղված նշանների, երեխաների նկատմամբ բռնության դեպքերի, վերարտադրողական առողջության հիմունքների և ընդհանրապես գենդերային հավասարության վերաբերյալ:

To improve the reception conditions and asylum procedures ARCS through its translators pool ensured 496 hours and 325 pages written free translation services for asylum seekers during RA State Migration Service interviewing processes, information sessions, individual and psychological consultations .

In frames of the project 10 information sessions and non-formal discussions were conducted for 164 refugees, asylum seekers and other persons of concern. The meetings were devoted to awareness raising on their rights, projects implemented by ARCS, including Tracing service presentation, UNHCR other projects representation, implementation of employment rights, functioning and House rules of "Reception Center" .

**• Sexual and Gender based violence prevention and response**

In the beginning of 2016 an SGBV Working group was reorganized to insure Sex and Gender based violence prevention and response. The main functional responsibility of the Working group was to ensure SGBV survivors needs timely response based on revised Standard Operational Procedures document.

SGBV prevention activities were conducted in the forms of trainings for different target groups, non-formal discussions, publications, as well as other events.

The trainings were organized for persons of concern (4 trainings, 75 participants), state bodies representatives (4 trainings, 97 participants), as well as for UNHCR implementing partners (4 trainings, 68 participants). The agenda included awareness on types of SGBV, their prevalence, symptoms, child abuse, reproductive health basics and gender equality in general.

As an awareness raising event in the framework of "16 Days of Activism against Gender-Based Violence/Gender Equality through Woman Empowerment" campaign, ARCS organized photo exhibition under the slogan "See the color Orange the world". After the exhibition a film watching and discussion was organized for persons of concern and implementing and functional partners representatives. ARCS project team presented some women entrepreneurs for the sale-exhibition organized by UNHCR in the framework of "16 days of activism against gender-based violence" campaign. Supporting their businesses is the best way to prevent gender inequality.

Another awareness raising event was organized in December "Winter School on SGBV Education" in the frames of "16 days of activ-

Որպես իրազեկության բարձրացմանն ուղղված միջոցառում՝ նոյեմբերի 29-ին «Կանանց նկատմամբ բռնությունների դեմ պայքարի ակտիվիզմի 16-օրյակի» շրջանակներում կազմակերպվել էր «Գենդերային հավասարություն՝ կանանց հզորացման միջոցով» հանդիպումը, որը կրում էր «Տես Գույնը, Նարնջագույն ներկիր աշխարհը» խորագիրը:

Դեկտեմբերին կազմակերպվել է ևս մեկ իրազեկմանն ուղղված միջոցառում «Սեռով և գենդերով պայմանավորված բռնությունների վերաբերյալ Ձմեռային դպրոց» համայնքային համախմբողների համար: Փախստական երիտասարդները ստացան լրացուցիչ գիտելիքներ թեմայի շուրջ և մասնակցեցին թիմային խաղերի:

Ծրագրի ՍԳՊԲ փորձագետների կողմից մշակվել և տպագրվել է ՍԳՊԲ վերաբերյալ տեղեկատվական թերթոնը, որի մեջ զետեղված համապարփակ և մատչելի ինֆորմացիա՝ ՍԳՊԲ տեսակների և մասնավորապես երեխաների նկատմամբ բռնության վերաբերյալ, որը մտահոգության առարկա հանդիսացող անձանց թույլ է տալիս պատկերացում կազմել բռնության այս տեսակների մասին, ինչպես նաև տեղեկություն է տալիս, թե ուր կարելի է դիմել նման դեպքերի հետ առնչվելիս:

**• Հոգեբանական աջակցություն**

2016թ. ընթացքում ծրագրի հոգեբաններն աշխատել են 15 շահառուի հետ՝ տրամադրելով 65 անհատական խորհրդատվություն:

**• Եկամտաբերության խթանում**

Եկամտաբերության խթանման գործունեությունը ՀԿԽԸ փախստականների ինտեգրմանն ուղղված ամենալայնածավալ և հաջողված ծրագրային բաղադրիչներից է:

2016թ. արդեն չորրորդ տարին է, ինչ այն իրականացվում է ՀԿԽԸ տարբեր ծրագրերի կողմից:

2016թ. ընթացքում 213 մտահոգության առարկա հանդիսացող անձ ՄԱԿ ՓԳՀ ծրագրի շրջանակներում ստացել է բիզնես գրանտ՝ սեփական բիզնես նախաձեռնելու նպատակով: Դրանց ճնշող մեծամասնությունը Սիրիայից տեղահանված անձինք են՝ 198 մարդ, 3 ներառված անձ հանդիսանում է Ուկրաինայի փախստական, իսկ 12 անձ՝ Ադրբեջանից ՀՀ-ում ապաստան գտած անձինք:

Ծրագրի ամենատարածված բիզնես ոլորտներից էին խոհարարությունը, կարի արհեստը, մեքենայի և այլ վերանորոգման աշխատանքները, դիզայնը, ոսկերչությունը, վարսահարդարումը, մատնահարդարումը, կոսմետոլոգիան և այլ ոլորտներ:

ism against gender-based violence" for community mobilizers. Refugee youth gained additional knowledge related the topic and participated in team building games.

SGBV project experts developed an information leaflet on SGBV which includes comprehensive and accessible information on SGBV types and particularly on child abuse, which allows persons of concern to have a vision of these types of violence, and also includes information on the organizations which can be approached for dealing with such cases.

**• Psychological support**

During the 2016 ARCS project psychologists worked with 15 persons of concern providing 65 individual consultations.

**• Income generation**

Income generation activity is one of the most expansive and successful project components in ARCS. 2016 was the third year this activity started by different project at ARCS.

During the 2016 within the UNHCR funded project 213 persons of concern received the business grant for initiating a small business. The prevailing majority of them are displaced persons from Syria- 198, 3 refugees from Ukraine and 12 refugees from Azerbaijan.

The most demanded area of business were cooking and catering, sewing, car maintenance and repairing works, design, jewelry, hairdressing and nail care, cosmetology etc..


I SAY NO TO VIOLENCE
AGAINST WOMEN AND GIRLS



# ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

**ՀԿԽԸ Առաջին Օգնության ուսումնամեթոդական կենտրոնի /ԱՕՈՒՄԿ/ գործունեության հիմնական նպատակն է բնակչության խոցելիության նվազեցումը տարբեր աղետների և դժբախտ պատահարների նկատմամբ՝ առաջին օգնության գիտելիքների տարածման միջոցով**

# FIRST AID

**The main goal of the First Aid Training Methodology Center /FATMC/ of the Armenian Red Cross Society /ARCS/ is decrease the vulnerability of the population towards different types of disasters and accidents by disseminating First Aid knowledge and skills**


40
40
40
40
40

# ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

## Գործունեության ոլորտները

ՀԿԽԸ Առաջին օգնության ուսումնամեթոդական կենտրոնը ԱՕ գիտելիքներ և հմտություններ է տարածում բնակչության տարբեր խավերի և տարիքային խմբերի շրջանում, իրականացնում է ԱՕ սպասարկում զանգվածային միջոցառումների ժամանակ, ինչպես նաև ծավալում գործունեությունը՝ ուղղված աճող սերնդի անվտանգ վարքագծի ձևավորմանը:

Կենտրոնն իրականացնում է Եվրոպական Խորհրդատվական Կենտրոնի չափանիշներին համապատասխանող առաջին օգնության (ԱՕ) և անվտանգ վարքագծի դաստիարակման (ԱՎԴ) դասընթացներ տարբեր տարիքային և մասնագիտական խմբերի համար:

ԱՕ դասընթացներ

2016թ. –ին դասընթացներ են իրականացվել ՀԿԽԸ կամավորների, տարբեր կազմակերպությունների աշխատակիցների, սահմանամերձ և հեռավոր համայքների բնակիչների համար: Ընդհանուր առմամբ, 2016 թվականի ընթացքում կենտրոնն իրականացրել է 70 դասընթաց և 15 սեմինար, որոնց մասնակցել է 1300 մարդ:

Մասնավորապես՝ դասընթացներ և սեմինարներ են իրականացվել «Վորլդ Վիժն», «Ջի Այ Զետ», «Ջիթիայ», «Կոկա-Կոլա», «ՆՈՒԵՎԱ ՎԻՍՏԱ» ՍՊԸ, ԼՂ ԱԱԾ, «Լիարժեք Կյանք»ՀԿ և միշարք այլ կազմակերպությունների աշխատակիցների համար:

## Առաջին օգնության դասընթացներ ՀՀ սահմանամերձ համայնքների բնակիչների համար

Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) օժանդակությամբ իրականացվել է 11 «Առաջին օգնության հիմունքներ» դասընթացներ ՀՀ Տավուշի և Սյունիքի մարզերում: Դասընթացներին մասնակցել են 184 հոգի:

Առաջին օգնությանդասընթացներ ՀՀ Տավուշի մարզի կամավորների համար Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) օժանդակությամբ իրականացվել է 2 Առաջին օգնության դասընթաց Տավուշի մարզի 30 կամավորների համար:

Առաջին օգնության կամավորական խմբերի տարածաշրջանային մրցումներ

Նոյեմբերի 25-ին Իջևանում անցկացվեցին ՀԿԽԸ Առաջին օգնության կամավորական խմբերի տարածաշրջանային մրցումներ: Այդ խմբերը ձևավորվել էին «Առաջին օգնության դասընթացներ ՀՀ Տավուշի մարզի կամավորների համար» և «Առաջին օգնության դասընթացներ ՀՀ սահմանամերձ համայնքների բնակիչների համար»

ծրագրերի շրջանակներում իրականացված «Առաջին օգնության հիմունքների» դասընթացների մասնակիցներից:

Իջևանում անցկացված մրցմանը մասնակցում էին կամավորական խմբեր սահմանամերձ Այգեհովիտ, Բերդավան, Ներքին Ծաղկավան, Կոթի գյուղերից, ինչպես նաև Իջևանից, որը ներկայացնում էին «Սոս մանկական գյուղեր»-ի սաները և Երևանից: Թեժ պայքարի արդյունքում հաղթող ճանաչվեց Ներքին Ծաղկավանի թիմը: Երկրորդ տեղը զբաղեցրեցին «Սոս մանկական գյուղեր»-ի սաները, իսկ Բերդավանի թիմը՝ երրորդ տեղը:

Միջոցառումն անց կացվել էր ՀԿԽԸ և ԿԽՄԿ համագործակցության ծրագրերի շրջանակներում:

ԱՕ հրահանգիչների նախապատրաստում

2016թ. Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) օժանդակությամբ իրականացվել է ԱՕ հրահանգիչների վերապատրաստման 2 դասընթաց, որին մասնակցել է ՀԿԽԸ 14 ԱՕ հրահանգիչ:

# FIRST AID

## The Spheres of Activities

The ARCS FATMC disseminates FA knowledge and skills among different groups of population, provides FA services at mass gatherings as well as engages in promoting Safe Behavior (SF) among the growing generation.

The FATMC holds trainings and seminars on FA and SB for people of different age and occupational groups in accordance with European standards Advisory Centre guidelines on First Aid.

First Aid Trainings

In 2016, trainings and seminars were held for the population of Armenia, ARCS volunteers as well as employees of different organizations. Overall, during the year 2016, the FATMC held 70 trainings and 15seminars attendedby1300people. The training courses were organized for staff of World Vision Armenia, GIZ, GTI, Coca-Cola, Nueva Vista ltd., NK EMERCOM, Full Life NGO and several other organizations.

## First Aid Trainings for the RA Population of Borderline Communities

With the support of the International Committee of the Red Cross (ICRC), 11 trainings on Basic First Aid were held in Tavush and Vayots Dzor regions. 184 people attended to the trainings.

First Aid Trainings for theVolunteers inTavush Region.

With the support of the International Committee of the Red Cross (ICRC), 11 trainings on Basic First Aid were held for 30 voluntaries in Tavoush regions.

ARCS First Aid Volunteer Teams Regional Competitions

On 25 November ARCS First Aid Volunteer Teams Regional Competition took place in Ijevan.The teams were formed from the participants of Basic First Aid Training courses organized within the frames of "First Aid Trainings for Volunteers in Tavush" and "First Aid Trainings for the RA Population of Remote Communities" project.

Participants of Competition in Ijevan were volunteer teams from borderline Aygehovit, Berdavan, NerqinTsakhkavan,Kotivillages, also team from Ijevan represented by "SOS children's village" pupils. As a result of the hot struggle the team from NerqinTsakhkavan became the winner. "SOS children's village" took the second place, Berdavanwas the 3rd.

The Competitions were organized within the frames of ARCS and ICRC cooperation.

Training of FA Instructors

In 2016 training for trainers was organizedwith the support of the International Committee of the Red Cross. ARCS 14 volunteers participated in the training.



## Հանրային միջոցառումներ

«Եվրոպա–Կովկաս-Ասիա տրանսպորտային միջանցք, TRACECA, ճանապարհային անվտանգություն 2-րդ» ծրագրի «Անվտանգ ճանապարհ դեպի դպրոց և տուն» պիլոտային բաղադրիչի շրջանակներում, 2016թ ապրիլի 12-13-ը ԱՕ բաժինը Երևանի Շիրվանզադեի անվ. N 21 և Խրիմյան Հայրիկի անվ. N 10 հիմնական դպրոցներում կազմակերպել էին «Ճանապարհը սխալներ չի ներում» կարգախոսով միջոցառումներ:

Դպրոցականները սկզբում դասասենյակներում քննարկեցին ճանապարհային անվտանգության կանոնները, այնուհետև, Հայկական Կարմիր խաչի ընկերության կամավորների և ոստիկանների հետ միասին, դպրոցի դիմաց անցկացրեցին իրազեկման ակցիա. երեխաները կանգնել էին ճանապարհի երկայնքով՝ ցուցադրելով «40» թիվը, որը հիշեցնում է վարորդներին, որ դպրոցների մոտ պետք է երթևեկել նշված արագությամբ: Դպրոցականները նաև շրջակա փողոցներում վարորդներին բաժանեցին տեղեկատվական թերթիկներ՝ ճանապարհային ռիսկերի վերաբերյալ:

## Ֆուտբոլի խաղերի սպասարկում

2016թ. ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի շրջանակներում Երևանում կայացած բոլոր խաղերի ընթացքում ԱՕ խմբերն իրանացրել են ԱՕ ծառայություն:

## Միջազգային համագործակցություն

- 2016 թ փետրվարին 18-19-ը ԱՕ բաժնի ներկայացուցիչը մասնակցել է Թբիլիսիում տեղի ունեցած «Եվրոպա–Կովկաս-Ասիա տրանսպորտային միջանցք, TRACECA, ճանապարհային անվտանգություն 2-րդ» ծրագրի շրջանակներում տարածաշրջանային հանդիպմանը: Սեմինարը կազմակերպել էին «Ճանապարհային անվտանգության գլոբալ համագործակցությունը» (ներկայացված՝ Կարմիր խաչի և Կարմիր Մահիկի Միջազգային ֆեդերացիայի կողմից) և նրա ծրագրի գործընկերը՝ «Արևելյան Դաշինք հանուն անվտանգ և հուսալի փոխադրման»:
- 2016թ հունիսի 30-ից հուլիսի 2-ը Լյուբլյանա քաղաքում ԱՕ ներկայացուցիչները մասնակցել են 28-րդ Եվրոպական Առաջին օգնության մրցումներին, որպես դիտորդ:
- 2016թ սեպտեմբերի 5-9 ԱՕ բաժնի ներկայացուցիչը մասնակցել է Ժնևում ԿԽԿՄ ՄԿ-ի կողմից կազմակերպված «Առաջին օգնություն, նախահիվանդանոցային խնամք » դասընթացին, որում ընդգրկված էին մեկ տասնակից ավել Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի ազգաին ընկերությունների ներկայացուցիչները:
- 2016թ սեպտեմբերին ԱՕ բաժնի ներկայացուցիչը մասնակցել է Իսրաելում Նորվեգական Կարմի խաչի ևԿարմիր Խաչի և Կարմիր Մահիկի Միջազգային ֆեդերացիայի կողմից կազմակերպված «Բազմաթիվ տուժածներով պատահարներ, քաղած դասեր» հանդիպմանը, որտեղ ներգրավված էին երկու տասնայկից ավել ազգային ընկերությունների ներկայացուցիչներ:

## ԱՕ գիտելիքների տարածում ԶԼՄ–ներում

Նախապատրաստվել և Հայաստանի Հանրային հեռուստաընկերության «Առավոտ լուսո», «Մայրիկների ակումբ», «Եթե ցավում է » ծրագրերի շրջանակներում եթեր է հեռարձակվել ԱՕ ցուցաբերման տարրական քայլերին նվիրված երկու տասնայկից ավել հաղորդումներ:

## Public Events

"Transport Corridor Europe-Caucasus-Asia, TRACECA, within the "2nd Road Safety"project "Safe Way to School and Home"pilot component in 2016 on 12-13 April FA organized events with the slogan "The road does not forgive mistakes" in Yerevan Shirvanzade N 21 and KhrimyanHayrik N 10 primary schools.

At the beginning, pupils discussed the road safety rules then Armenian Red Cross Society volunteers and police officers together held an action in front of the school.The children were standing along the road, showing the number "40"as a reminder for drivers to drive in the near school areas with that speed.Schoolchildren distributed leaflets in the surrounding streets, sharing information on road risks.

## Football Games Service

In 2016, FA teams provided FA service during all the football events in Yerevan within the scope of FIFA and UEFA.

## International Cooperation

- Representative of FA department participated in the sub-regional workshop "Road safety fundamentals and interventions" organized by Global Road Safety Partnership (GRSP) (hosted by the International Federation of Red Cross and Red Crescent Societies) and its project partner Eastern Alliance for Safe and Sustainable Transport (EASST). The workshop took place in Georgia.
- In 2016 from 30 June to 2 July the representative of FA participated in the 28th European Championship as an observer in Ljubljana.
- n 2016 on 5-9 September the representative of FA department took part in a "first aid, pre-hospital care" course, in Geneva, organized by IFRC FA Department of Adult Educationcourse, consisting of more than a dozen representatives of the Red Cross and Red Crescent National Societies.
- In September 2016 the FA department took part in the meeting "Accidents with many victimsand the lessons learned" organized by the Norwegian Red Cross and the Red Cross and Red Crescent International Federation, where were involved more than two dozen representatives of national companies.

## Disseminations of First Aid Knowledge through Mass Media

Several programs on FA basics were prepared and broadcasted within the frames of "Mothers' Club", "Morning Light", "If It Hurts"TV shows.



# «ՈՐՈՆՈՒՄ» ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Հայկական Կարմիր խաչի ընկերության «Որոնում» ծառայության գործունեությունն ուղղված է բնակչության տեղաշարժի արդյունքում կազմալուծված ընտանիքների վերամիավորմանը, պատերազմների, աղետների և հակամարտությունների հետևանքով անհայտ կորածների որոնմանը և զոհվածների շիրիմների վայրը հաստատող փաստաթղթերի հայտնաբերմանը, Երկրորդ Համաշխարհային պատերազմի ընթացքում տարհանված, գերության մեջ և հարկադիր աշխատանքային գաղութներում գտնվելու փաստը հաստատող փաստաթղթերի որոնմանը և հատկացմանը

# TRACING SERVICE

The Armenian Red Cross Society Tracing Service is dedicated to restoration of family links lost through population movement, tracing the Missing and searching of notifications confirming burial places of the victims as a consequence of war, conflict and disasters, tracing and provision of documents confirming the captivity, evacuation, forced labor and departure during the Second World War.

# «ՈՐՈՆՈՒՄ» ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) «Որոնում» ծառայության գործունեությունն ուղղված է արձագանքելու մարդկանց, ում հարազատներն անհայտ կորած են, կամ որոնք տարանջատված են հարազատներից այնպիսի իրավիճակներում, ինչպիսիք են հակամարտությունները, աղետները, բնակչության տեղաշարժը, միջազգային միգրացիան և մարդասիրական արձագանք պահանջող այլ իրավիճակները:

### Ընտանեկան կապերի վերականգնում

2016 թ. ընթացքում Հայկական Կարմիր խաչի ընկերության «Որոնում» ծառայությունը ստացել է ավելի քան 20 հայտ հետևյալ ուղղություններով. անհատների որոնում, ընտանիքի մասին տեղեկությունների փոխանակման կազմակերպում, ընտանիքի անդամների հետ վերամիավորմանը կամ սոցիալական իրավիճակի բարելավմանը նպաստող փաստաթղթերի որոնում և հատկացում, զոհվածների շիրիմների գտնվելու վայրի որոնում և դրանց գոյությունը հաստատող փաստաթղթերի տրամադրում, Երկրորդ Համաշխարհային պատերազմի ընթացքում տարհանված, գերության մեջ և հարկադիր աշխատանքային գաղութներում գտնվելու փաստը հաստատող փաստաթղթերի որոնում և հատկացում: Ընթացք է տրվել 20 հայտի, որոնց արդյունքները դեռ վերջնական ամփոփված չեն:

Ընտանեկան կապերի վերականագնում (ԸԿՎ) վերաբերյալ իրազեկվածության բարձրացում. պատրաստվել և եթեր է հեռարձակվել սոցիալական տեսահոլովակ, որը նպաստել է ԸԿՎ ուղղությամբ «Որոնում» ծառայության գործունեության լուսաբանմանը, ինչպես նաև բնակչության շրջանում ԸԿՎ վերաբերյալ իրազեկմանը:

ՀԿԽԸ Որոնում բաժնի կողմից իրականացվող ԸԿՎ գործունեության վերաբերյալ տեղեկատվական բնույթի գործառույթների շրջանակում թողարկվել է 2017 թվականի ԸԿՎ գործունեության մասին տեղեկատու օրացույց: Կազմակերպվել է հանդիպում-սեմինար ՀԿԽԸ մասնաճյուղերի ղեկավարների և կամավորների հետ՝ ԸԿՎ տեղեկատվության թարմացման և հետագա ռազմավարական աշխատանքների վերամշակման նպատակով:

### ՀԿԽԸ Որոնում ծառայության գործունեությանը նվիրված կլոր-սեղան հանդիպում

դեկտեմբերի 12-ին Հայկական Կարմիր խաչի ընկերության Գլխավոր գրասենյակում տեղի ունեցավ կլոր-սեղան հանդիպում՝ նվիրված ընկերության

# TRACING SERVICE

The Armenian Red Cross Society (ARCS) Tracing Service (TS) is dedicated to helping people whose relatives are unaccounted for or who are separated from them as a consequence of armed conflict, disasters, population movement, international migration and other situations requiring a humanitarian response.

### Restoring Family Links (RFL)

in 2016 the Armenian Red Cross Society Tracing Service received more than 20 enquiries in the following forms: tracing of individuals, organizing the exchange of family news, obtaining and providing documents necessary for restoring family links or for improving the social status, tracing or assisting in tracing of burial places/graves of military personnel and civilians of the Second World War and providing information about the state of such burial places, tracing and issuance of documents confirming that a person was subjected to evacuation, captivity, forced departure of forced labor during the Second World War. As a result of the work done, 20 enquiries were addressed. The results are pending.

RFL awareness – RFL promotional video was made and broadcasted by TV aimed at raising awareness of RFL amongst the affected populations and outreaching the RFL activities carried out by the ARCS Tracing Service.

An informative Calendar of 2017 have been produced for raising general population knowledge on RFL activities in Armenia.

An informative meeting-seminar has been held for ARCS Branch leaders and volunteers on RFL information updates and planning of upcoming strategies in regions on RFL activities.

### Round Table meeting devoted to the ARCS Tracing Service's Restoring Family Links (RFL) activities

On December 12, 2016, Round table meeting took place at the Headquarters of Armenian Red Cross Society, concerning the tracing

Որոնում ծառայության կողմից իրականացվող Որոնման ու Ընտանեկան կապերի վերականգնմանն (ԸԿՎ) ուղղված գործունեությանը:

Հանդիպմանը ներկա էին ոլորտում գործող պետական, միջազգային և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ Կարմիր խաչի միջազգային կոմիտեից, ՀՀ Ազգային արխիվից, ՀՀ Արդարադատության նախարարության ՔԿԱԳ գործակալությունից, ՀՀ ոստիկանության Անձնագրային և վիզաների վարչությունից, Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության Միգրացիոն պետական ծառայությունից, Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակից և Հայկական Կարմիր խաչի ընկերությունից:

Կլոր սեղանը նպատակ ուներ լրացնել համագործակցող և շահագրգիռ կողմերի միջև գոյություն ունեցող տեղեկատվական բացը, պարզաբանել որոնման և ընտանեկան կապերի վերականգնման աշխատանքները կազմակերպելու ընթացքում ծագող իրավական բնույթի հարցեր և հրավիրել համագործակցող և շահագրգիռ կողմերի ուշադրությունը դեպի ընտանեկան կապերի վերականգնմանն ուղղված գործունեության կարևորությունը՝ հիմք ընդունելով հարազատների՝ միմյանց հետ հաղորդակցվելու և միմյանց գտնվելու վայրի ու ճակատագրի վերաբերյալ տեղեկացված լինելու իրավունքը:

Հանդիպման արդյունքում ձևավորված համագործակցության դաշտն ու հասցեագրված խնդրո առարկա հարցերն իրենց դրական ներգործությունը կունենան ՀԿԽԸ Որոնում ծառայության ԸԿՎ արդյունավետ գործունեության բնագավառում:

Սատարում անհայտ կորածների ընտանիքներին. Ղարաբաղյան հակամարտության հետևանքով կան դեռևս հազարավոր անհայտ կորած անձիք, որոնցից մոտ 400-ի վերաբերյալ Հայաստանում բացվել են որոնման հայտեր: ԿԽՄԿ-ի պատվիրակությունն անց է կացրել տարբեր գնահատումներ ու եկել է այն եզրակացության, որ նույնիսկ 20 տարի անց անհայտ կորածների ընտանիքներն (ԱԿԸ) ունեն տնտեսական, իրավական, հոգեբանական և/կամ սոցիալական կարիքներ:

Նախկինում իրականացրած «Անհայտ կորածների մինչմահու տվյալների հավաքագրում» ծրագրի ընթացքում առավել ակնհայտ դարձան անհայտ կորած հարազատ ունենալու սոցիալ-հոգեբանական ծանր հետևանքները: Դա հիմք ընդունելով՝ Կարմիր խաչի Միջազգային կոմիտեն (ԿԽՄԿ) և ՀԿԽԸ-ն՝ ԿԽՄԿ-ի ֆինանսավորմամբ, ձեռնարկեցին «Սատարում անհայտ կորածների ընտանիքներին» ծրագիրը, որի նպատակն է սատարել անհայտ կորածների ընտանիքներին՝ հարազատի անհետացման արդյունքում առաջ եկած սոցիալ-հոգեբանական ծանր հետևանքները հաղթահարելու գործում:

2016թ.-ին ծրագրում ներգրավված են եղել Տավուշի՝ 11, Շիրակի՝ 11, Լոռու՝ 19, Արարատի՝ 34, Արմավիրի՝ 40, Վայոց Ձորի՝ 5, Սյունիքի՝ 47 և Սևանի՝ 15 անհայտ կորած անձանց ընտանքիներ: Այս մարզերում բնակվող ԱԿԸ-

and Restoring Family Links activities carried out by the ARCS Tracing Service.

Representatives of public authorities, international and non-governmental organizations in the sector, in particular the International Committee of the Red Cross, National Archive of the RA, Civil Registry Agency of Ministry of Justice of the RA, Passport and Visa Department of Police of the RA, State Migration Service of Ministry of Territorial Administration and Emergency Situations of the RA, UNHCR and ARCS participated in the meeting.

Meeting was aimed at providing the stakeholders and cooperating parties with comprehensive information about the ARCS Tracing Service's role and activities in RFL, discussing and addressing legal issues occurring during the aforementioned activities as well as drawing attention of the agencies to the significance of the activities aimed at Restoring Family Links in light of the right of relatives to communicate with one another and be informed of each other's whereabouts or fate.

Cooperation and partnership formed as a result of the meeting as well as the addressed issues will largely contribute to the overall RFL activities carried out by the ARCS's Tracing Service.

Accompanying Families of Missing Persons - In the aftermath of the Karabakh conflict as many as 4541 people are still missing, and for 400 of them tracing requests were opened in Armenia. The ICRC delegation conducted a variety of assessments and concluded that even after more than 20 years, families of missing persons still have economic, legal, psychological and/or social needs.

Social and psychological severe consequences of having missing relatives became more obvious during the previous project (Ante-Mortem Data Collection from the Families of Missing). Based on these, the ICRC and the ARCS launched the "Accompanying Families of Missing Persons" project by the financial support of the ICRC aimed at helping the families of missing persons to cope with the psychological and social consequences of the disappearance.

In 2016, families of missing (FoMs) persons from Tavush - 11, Shirak – 11, Lori – 19, Ararat 34, Armavir – 40, Vayots Dzor – 5, Syuniq – 47 and 15 families from Sevan were involved in the program. Overwhelming majority of the families of the missing persons in the afore-

ների ճնշող մեծամասնությունը կանոնավոր կապ է պահպանում ՀԿԽԸ-ի սոցիալական աշխատողների և մարզային մասնաճյուղերի նախագահների հետ: Մասնաճյուղերի հնարավորությունների շրջանակներում՝ հմտությունների զարգացմանն ուղղված դասընթացներ են կազմակերպվել գրեթե բոլոր մարզերում: ԱԿԸ-ների անդամները անցել են խոհարարական, նկարչության և գոբելենի դասընթացներ. պայմանավորված վերջինիս առավել տպավորիչ արդյունքներով՝ Տաթևում կազմակերպվեց ցուցահանդես Վեդիի ԱԿԸ-ների անդամների կողմից, որին մասնակցեցին Արարատի, Սյունիքի և Վայոց Ձորի մարզերի շահառուները: Ցուցահանդեսը նվիրված էր նհայտ կորածների հիշատակման միջազգային օրվան: Շիրակում և Լոռիում Անհայտ կորածների հիշատակման միջազգային օրը ևս նշանավորվեց հատուկ միջոցառումներով:

Կարմիր խաչն այդ ընտանիքների հետ է եղել նաև Ամանորին՝ կազմակերպելով տոնակատարություններ: Տարվա ընթացքում նրանք նաև մասնակցել են մշակութային միջոցառումներին և էքսկուրսիաներին: Շահառու ընտանիքների համար պարբերաբար անց են կացվել հանդիպումներ սոցիալական, առողջապահական, հոգեբանական ոլորտների մասնագետների հետ:

Արդյունքում, ՀՀ ութ մարզերում բնակվող անհայտ կորած անձանց ընտանիքները մշտական կապ են պահպանում ՀԿԽԸ մարզային մասնաճյուղերի սատարող անձնակազմի (սատարողներ)՝ սոցիալական աշխատողների և նախագահների հետ: ՀԿԽԸ սատարողները տունայց են կատարում յուրաքանչյուր մարզում բնակվող առնվազն մի քանի ԱԿԸ-ին: ԱԿԸ-ներն իրենց գոհունակությունն են հայտնում մատուցած ծառայությունների համար և պատրաստակամ են մասնակցել ՀԿԽԸ կազմակերպած սատարման հետագա միջոցառումներին:

## Կենսաբանական նմուշների հավաքագրում

Անհայտ կորած անձանց վերաբերյալ լրացուցիչ տեղեկություն ձեռք բերելու նպատակով ԿԽՄԿ-ն ձեռնարկեց «Կենսաբանական նմուշների հավաքագրում» (ԿՆՀ) պիլոտային ծրագիրը, որը Հայաստանի իշխանությունների անունից և ՀԿԽԸ-ի հետ համագործակցությամբ մեկնարկեց 2014թ-ին: 2016թ.-ին ծրագիրն իրականացվեց Երևանում և մարզերում: Արդյունքում մոտ 129 անհայտ կորած անձանց հարազատներից հավաքագրվեցին կենսաբանական նմուշներ և վերաբերելի տվյալներ:

mentioned regions are maintaining a regular contact with the ARCS social workers and chairmen of Regional Branches. Doing their best, the regional branches organized skills development activities almost in all regions; culinary courses, drawing and tapestry making classes for families of missing persons were offered as well. Due to the latter's success, many of the tapestries were presented at an Exhibition in Tatev organized by Vedi stakeholders.

The Red Cross took the opportunity to organize New Year celebration events with the FoMs, cultural events and excursions. Beneficiary families had also opportunities to meet specialists of Health, Social and Psychological sphere.

The activities have resulted in having the FoMs in eight regions maintaining regular contacts with the ARCS branches' accompaniers (social workers, chairpersons), as many as several families at every region are being visited at their homes. On many an occasion the FoMs have expressed their satisfaction with the provided services and demonstrated willingness to participate in the accompaniment activities in the future.

## Biological Reference Samples Collection (BRSC)

With a view of obtaining additional information on missing persons, the ICRC had initiated the BRSC Pilot project, which on behalf of Armenian authorities and in a partnership with the ARCS launched in 2014. Because of the program being carried out in full swing, in the course of 2016 in Yerevan and regions, biological reference samples of and relevant information on relatives of about 129 missing persons were collected.


COMITE INTERNATIONAL
GENEVE


MK

# ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՏԱՐԱԾՈՒՄ

# DISSEMINATION OF RED CROSS PRINCIPLES AND HUMANITARIAN VALUES

# ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ և ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ

Կարմիր խաչի սկզբունքների և մարդասիրական արժեքների տարածման նպատակն է բարձրացնել հասարակության իրազեկվածության մակարդակը Կարմիր խաչի և Կարմիր մահիկի (Կխ և ԿՄ) միջազգային շարժման պատմության, բաղկացուցիչների, Հիմնարար սկզբունքների, Միջազգային մարդասիրական իրավունքի (ՄՄԻ), խորհրդանշանների գործածության և չարաշահման, Ազգային ընկերության գործունեության և առաքելության վերաբերյալ, ինչպես նաև ամրապնդել կազմակերպության կապը լրատվամիջոցների հետ՝ աջակցելով Հայկական Կարմիր խաչի ընկերության, որպես մարդասիրական ոլորտում կառավարությանն օժանդակ կազմակերպության, գործունեության ճիշտ ընկալմանն ու լուսաբանմանը:

## Լուսաբանում

ՀԿԽԸ-ն սերտորեն համագործակցում է Կարմիր Խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) հետ և վերջինիս ֆինանսավորմամբ իրականացնում «Լուսաբանում» ծրագիրը: Ծրագրի շրջանակներում պարբերաբար լուսաբանումներ են իրականացվում տարբեր ուսումնական հաստատություններում, միջազգային և տեղական կազմակերպություններում՝ ներկայացնելով ՀԿԽԸ գործունեությունը:

Հաշվետու տարվա ընթացքում Կխ և ԿՄ միջազգային շարժման, ՀԿԽԸ գործունեության, ՄՄԻ և լրատվամիջոցների հետ արդյունավետ աշխատանքի կազմակերպման մասին կամավորների գիտելիքների մակարդակը բարձրացնելու նպատակով պարբերաբար կազմակերպվել են մի շարք դասընթացներ և քննարկումներ:

Տարվա ընթացքում Հայկական Կարմիր խաչի ընկերությունն ակտիվորեն համագործակցել է ԶԼՄ-ների հետ՝ լրագրողներին հրավիրելով կազմակերպության համար նշանակալի իրադարձություններին:
Գրվել և տարածվել է 8 մամուլի հաղորդագրություն: ՀԿԽԸ միջոցառումների վերաբերյալ պատրաստվել և հեռարձակվել է 3 տեսանյութ, աշխատակիցները մասնակցել են 5 հեռուստահաղորդման՝ ներկայացնելով ՀԿԽԸ ծրագրային գործունեությունը կամ ԱՕ հմտություններ: Պաշտոնական կայքին զուգահետ, կազմակերպությունն իր գործունեությունն ակտիվորեն լուսաբանում է նաև սոցիալական ցանցերի միջոցով՝ Facebook, Twitter, YouTube, Flickr:

Հրատարակվել է «ՀԿԽԸ 2015թ. տարեկան զեկույցը», ՀԿԽԸ գործունեությունը ներկայացնող տեղեկագրերը՝ հունվար-հունիս և հուլիս-դեկտեմբեր ամիսների կտրվածքով, պատրաստվել են տեղեկատվական նյութեր, ՀԿԽԸ լոգոյով օրացույցներ, բաններներ, ծրարներ, տոպրակներ, բլոկնոտներ, թղթապանակներ և այլն:

2016 թվականի սեպտեմբեր–դեկտեմբեր ամիսներին ՀԿԽԸ Լոռու, Շիրակի, Արարատի, Կոտայքի, Գեղարքունիքի, Տավուշի, Արմավիրի, Վայոցձորի,

# INFORMATION AND DISSEMINATION

Dissemination of Red Cross Principles and Values aims at raising public awareness on the history of the Red Cross and Red Crescent (RC/RC) Movement, its components, main principles, International Humanitarian Law (IHL), promoting use and protection of RC Emblem, activities and mission of the National Society, as well as strengthening the contacts with mass media to ensure the correct perception and dissemination of activities of the Armenian Red Cross Society  role as an auxiliary to the Government.

## Dissemination

ARC Sclosely cooperates with the International Committee of the Red Cross (ICRC) and with the funding of the latest implements "Dissemination" project. In the frames of the project regular disseminations are being implemented in different educational institutions, international and local organizations, presenting ARCS activities.

During the reportedperiod, with the purpose of raising the volunteers' awareness level on International RC/RC Movement, ARCS activities, as well as on organizing effective work with Mass Media Outlets, number of training sessions and discussions were organized.

"ARCS Annual Report 2015", newsletters covering  main activities of January-June and July-December periods,  informational materials, calendars, posters, envelops, paper bags and pins with ARCS logo were published during the year.

To ensure the visibility if ARCS activities, dissemination activities have been implemented in RA regions. In September-December 2015, ARCS dissemination volunteers of Lori, Shirak, Ararat, Kotayk, Gegharquniq, Tavush, Vayots dzor and Syuniq regions implemented dissemination projects to raise awareness on Red Cross/Red Crescent International Movement history, components, IHL, emblem use and misuse. Overall, in 87 schools and educational institutions Red Cross volunteers conducted dissemination sessions, and for about 1500 pupils, students and teachers participated in those lessons.

During the year ARCS actively cooperated with Mass Media, invit-



Հայկական Կարմիր խաչի ընկերությունը՝ մայիսի 8-ին, միանալով Կարմիր խաչի ընտանիքին ևս նշեց Կարմիր խաչի և Կարմիր մահիկի համաշխարհային օրը:
ՀԿԽԸ Գլխավոր գրասենյակը՝ Մեդիամաքս մեդիա ընկերության հետ համագործակցությամբ մայիսի 16-ին հայտարարեց «Մարդասիրություն. մարդ լինելու արվեստը» վերնագրով էսսեների նախագծի մեկնարկը:
On 8 May, Armenian Red Cross Society joined Red Cross family and also celebrated World Red Cross Red Crescent Day. On 16 May, ARCS Headquarters in cooperation with the Mediamax media company announced the launch of the essay project titled “Humanity. The Art of Being Human”.

Սյունիքի մարզային մասնաճյուղերն իրականացրեցին լուսաբանման ծրագրեր, որոնց նպատակն էր հանրության, հատկապես՝ երիտասարդության շրջանում տարածել Կարմիր խաչի սկզբունքները և մարդասիրական արժեքները, բարձրացնել իրազեկվածությունը Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժման պատմության, բաղկացուցիչների, Միջազգային մարդասիրական իրավունքի, խորհրդանշանների գործածության և չարաշահման վերաբերյալ: Ընդհանուր առմամբ հանրապետության 87 դպրոցներում և ուսումնական հաստատություններում՝ Կարմիր խաչի կամավորներն անցկացրել են Կարմիր խաչի շարժման վերաբերյալ դասընթացներ, որոնց մասնակցել է 1500-ից ավելի աշակերտ, ուսանող և ուսուցիչ:

ԶԼՄ-ների հետ ռազմավարական կապեր հաստատելու և ՀԿԽԸ գործունեությունը լուսաբանելու համարառաջատար մեդիա փորձագետների ներգրավմամբ դասընթաց կազմակերպվեց Երևանի ԲՈՒՀ-երի լրագրության ֆակուլտետի ուսանողների համար՝ «Կարմիր խաչի գործունեությունը և էքստրեմալ պայմաններում լրագրողների աշխատելու հմտությունները» թեմայով:

ing Media representatives to cover remarkable events. ARCS staff and volunteers participated in number of TV shows presenting organization's activities and projects. 1 film and 15 videos have been made on ARCS projects and activities. In parallel to the official website, ARCS activities have been actively promoted my social networks, such as Facebook, Twitter, YouTube, Flickr.

For establishing strategic relationship with Mass Media and present ARCS activities, a training session titled "Red Cross activities and skills for journalists working in extreme conditions was organized for the students of journalism faculties of Yerevan Universities", involving leading experts of the field.





ՀԿԽԸ-ն ակտիվորեն համագործակցում է ԶԼՄ-ների և մեդիա կազմակերպությունների հետ. կազմակերպում դասընթացներ և սեմինարներ լրագրողների համար
ARCS actively cooperates with Mass Media Outlets and Media Organizations, organizing seminars and workshops for  journalists



# ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉ

# RED CROSS YOUTH

**Երիտասարդական Կարմիր Խաչը (ԵԿԽ) Հայկական Կարմիր խաչի ընկերության շրջանակներում գործող կամավոր անդամներիերիտասարդականմիավորումն է, որը հիմնադրվել է 1992թ. նոյեմբերի 3-ին: Այն գործում է ՀԿԽԸ բոլոր մարզային և տարածքային մասնաճյուղերում և գործունեություն է ծավալում հետևյալ ոլորտներում.**

### Սոցիալական խնամք

• իրականացնում է սոցիալ-հոգեբանական աջակցության ծրագրեր ուղղված հանրակացարանաբնակ միայնակ ծերերին, ծնողազուրկ, փախստական և անապահով ընտանիքների երեխաներին

### Առողջապահություն

• իրականացնում է ՄԻԱՎ-ի կանխարգելմաննուղղվածծրագրեր
• կազմակերպում է բազմաբնույթհանրայինմիջոցառումներ ու առողջապրելակերպիթեմաներովդասընթացներուսումնականհաստատություններում
• գործարկում է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի SMS տեղեկատվական գիծ

### Ռեսուրսների հայթայթում

• իրականացնում է Ռեսուրսներիհայթայթմանծրագրեր
• կազմակերպում է քարոզարշավներ, դրամահավաքներ, հանգանակություններ, բարեգործականերեկոներ
• պատրաստում է բացիկներ, զարդեր և այլ նյութեր բարեգործական միջոցառման համար

### Միջազգային համագործակցություն

• իրականացնում է երիտասարդ կամավորների փոխանակում Բրիտանական ևԳերմանական Կարմիր Խաչերի հետ «Եվրոպական կամավորական ծառայություն» ծրագրի շրջանակներում
• կազմակերպում և մասնակցում է միջազգային հավաքների, ճամբարների, սեմինարների, թրեյնինգների

### Կարմիր Խաչի մարդասիրական արժեքներիլուսաբանում

• կազմակերպում է Կարմիր Խաչի գաղափարներիլուսաբանում դպրոցներում և բուհերում
• նպաստում է կամավորական շարժման խթանմանը, կամավորների հավաքագրմանն ու ՀԿԽԸ գործունեության մեջ ներգրավմանը
• հրատարակում է ԵԿԽ գործունեությունը լուսաբանող տեղեկագիր:

**Red Cross Youth (RCY) is young volunteer members organization acting in the frames of the Armenian Red Cross Society (ARCS), founded on 3 November, 1992. It acts in all ARCS regional and territorial branches and works in the following spheres:**

### Social care

• Implementing psychosocial support programs for lonely elderly people living in dormitories, orphans, refugee children and children from vulnerable families.

### Health care

• Implementing HIV prevention programs
• Organizing different public events and training sessions on healthy life-style in educational institutions
• Launching "SMS informational line" on HIV/AIDS

### Fund raising

• Implementing  Fund Raising programs
• Organizing campaigns, fund raising and charity dinners
• Making post cards, jewelry and other goods for charity events

### International cooperation

• In the frames of the "European Voluntary Service" is implementing exchange of young volunteers between British and German Red Crosses
• Organizing and participating in international meetings, camps, seminars and training sessions

### Dissemination of Red Cross humanitarian values

• Organizing the dissemination of Red Cross principles in educational institutions
• Promoting the activation of voluntary movement, recruiting of volunteers and their integration into the activities of ARCS
• Publishing newsletters on RCY activities.















# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

**Հայկական Կարմիր խաչի ընկերությունն իր գործունեության ընթացքում մշտապես համագործակցում է Կարմիր խաչի և Կարմիր մահիկի /ԿԽ և ԿՄ/ միջազգային շարժման բոլոր բաղկացուցիչների, կառավարության, միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների հետ**

# INTERNATIONAL COOPERATION

**The Armenian Red Cross Society within its activities continuously cooperates with all components of the Red Cross and Red Crescent /RC/RC/ International Movement, Governments, international and local organizations**

# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

**Հայկական Կարմիր խաչի ընկերությունն իր գործունեության ընթացքում մշտապես համագործակցում է Կարմիր խաչի և Կարմիր մահիկի (Կխ և ԿՄ) միջազգային շարժման բոլոր բաղկացուցիչների, կառավարության, միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների հետ:**

2016 թվականի ընթացքում ՀԿԽԸ-ն իրականացրել է համատեղ ծրագրեր և համագործակցել է Գերմանական, Դանիական, Ավստրիական, Շվեյցարական, Իսլանդական, Իտալական, Ամերիկյան, Բրիտանական Կարմիր խաչերի, Գերմանական Կարմիր խաչի Բադեն-Վյուրտեմբերգի երկամասային կազմակերպության, ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գործակալության, Եվրահանձնաժողովի մարդասիրական օգնության բաժնի, Եվրոպական Միության, Ավստրիայի զարգացման գործակալության, Վորլդ Վիժն և մի շարք այլ միջազգային և տեղական կազմակերպությունների հետ:

Տարվա ընթացքում Հայկակական Կարմիր խաչի ընկերությունը մասնակցել է մի շարք կարևոր միջազգային հանդիպումների: ՀԿԽԸ աշխատակիցները և կամավորները ներկայացրել են Ազգային ընկերությունը միջազգային տարբեր նշանակալի միջոցառումների ընթացքում, մի շարք տարածաշրջանային, ինչպես նաև միջազգային համագործակցության հանդիպումների և դասընթացների, պարբերաբար կազմակերպվող սեմինարների և կոնֆերանսների, ուսումնական դասընթացների, ճամբարների և այլ հանդիպումների ժամանակ:

## Գործընկերների հանդիպում

Ապրիլի 14-ին Հայկական Կարմիր խաչի ընկերության Գլխավոր գրասենյակում տեղի ունեցավ Գործընկերների հանդիպում, որի նպատակն էր քննարկել Ազգային ընկերության վերջին տարիների ձեռքբերումներն ու զարգացման հինգ տարվա պլանը:

Հանդիպմանը ներկա էին Կարմիր խաչի և Կարմիր մահիկի հայաստանյան պատվիրակության և տարածաշրջանային համագործակցության, Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային ֆեդերացիայի եվրոպական տարածաշրջանի ղեկավարները, Դանիական, Ավստրիական, Շվեյցարական և Իսլանդական Կարմիր խաչերի ներկայացուցիչներ:

Ողջունելով հյուրերին` ՀԿԽԸ Գլխավոր քարտուղար Աննա Եղիազարյանը ներկայացրեց Հայկական Կարմիր խաչի ընկերության ներկայիս ընդհանուր իրավիճակը, անդրադարձավ 2015թ ձեռքբերումներին Կազմակերպության

# INTERNATIONAL COOPERATION

**The Armenian Red Cross Society (ARSC) within its activities continuously cooperates with all components of the Red Cross and Red Crescent International Movement, Governments, international and local organizations. In this way the National Society establishes new relations, strengthened its cooperation with local and international organizations, as well as with sister NS's.**

In 2016 ARCS implemented joint programs with German, Danish, Austrian, Swiss, Icelandic, Italic, American, British, Red Crosses, Baden-Wurttemberg Provincial Branch of German Red Cross, United Nations High Commissioner for Refugees, European Commission - Civil Protection and Humanitarian Aid Operations (ECHO), European Union, Austrian Development Agency, World Vision and other International and local organizations.

Throughout the year ARCS participated in a number of important international meetings. ARCS staff members and volunteers presented NS during various important international events, in a number of regional, as well as international cooperation meetings and training sessions, regularly organized seminars and conferences, educational training sessions, summer camps.

## Partnership Meeting

On 14 April, at Armenian Red Cross Society Headquarters, Partnership Meeting took place, having the main point in the Agenda the discussion of National Society's recent years' achievements and 5-year development plan.

Leaders of International Committee of Red Cross delegation in Armenia, ICRC Regional Cooperation and International Federation of Red Cross and Red Crescent Societies Euro Zone, Danish, Austrian, Swiss and Icelandic Red Cross representatives attended the meeting.

Welcoming the guests, Dr. Anna Yeghiazaryan, Secretary General of Armenian Red Cross Society, presented current overall situation of ARCS, spoke about the goals achieved 2015, as





ՀԿԽԸ-ն Շվեյցարական Կարմիր խաչի 150-ամյակին նվիրված միջոցառմանը

ARCS at the Swiss Red Cross 150th anniversary celebration.

կարողությունների գնահատում և հավաստագրում վարժության հիման վրա մշակված գործողությունների 5-ամյա պլանին, դրա շրջանակներում մշակված Հիմնական ծախսերի մոդելին:

Օրակարգում էին նաև Ազգային ընկերության՝ Ռեսուրսների մոբիլիզացիայի ոլորտում իրականացվող քայլերի ներկայացումն ու քննարկումը, այդ թվում՝ ԿԽՄՖ աջակցությամբ իրականացված Շուկայի ուսումնասիրության արդյունքների ներկայացումը:

ՀԿԽԸ գործընկերները ակտիվորեն մասնակցեցին նշված հարցերի շուրջ ծավալված քննարկումներին, ներկայացրեցին իրենց տեսակետներն ու մոտեցումները՝ հետագա համագործակցության վերաբերյալ:

Գործընկեր Ազգային ընկերությունների ներկայացուցիչները նշեցին, որ բարձր են գնահատում Հայկական Կարմիր խաչի ընկերության հետ համագործակցությունը և պատրաստ են շարունակել համատեղ ծրագրերը:

## Մշակվում է Շարժման արձագանքման պլան

«Կարմիր խաչի/Կարմիր մահիկի Շարժումն ապահովում է Հայկական Կարմիր խաչի ընկերության հզորացումը, կարողությունը և աջակցությունը՝ հակամարտություններից և բռնության այլ իրավիճակներից տուժած մարդկանց մարդասիրական կարիքներին ժամանակին և համակարգված արձագանքելու համար». Այս նպատակը ձևակերպվեց Շարժման գործընկերների կողմից, որոնք սեպտեմբերի 6-ին հավաքվել էին Հայկական Կարմիր խաչի ընկերության գլխավոր գրասենյակում՝ Շարժման արձագանքման պլան մշակելու ռազմավարական հանդիպմանը, որին հաջորդեց Ծաղկաձորում երկօրյա աշխատաժողովը:

Հայկական Կարմիր խաչի ընկերության (Գլխավոր գրասենյակ և մարզային մասնաճյուղեր), ԿԽՄԿ, ԿԽՄՖ, Դանիական, Ավստրիական, Իսլանդական, Գերմանական և Շվեյցարական Կարմիր խաչերի, ինչպես նաև Իրանական Կարմիր մահիկի բարձրաստիճան ներկայացուցիչները ներկա գտնվեցին այս միջոցառմանը՝ Հայաստանում տեղի ունեցող կոնֆլիկտներին համատեղ արձագանքելու մանրակրկիտ հայեցակարգ և գործիքակազմ մշակելու համար:

2016 թվականի ապրիլին, Լեռնային Ղարաբաղի շուրջ հակամատությունը, 1994 թվականից՝ պատերազմի ավարտից ի վեր, հասավ նոր, աննախադեպ լարվածության աստիճանի: Դա հանգեցրեց հարյուրից ավելի զոհերի և Լեռնային Ղարաբաղից մի քանի հազար մարդու տեղահանման: ԿԽՄԿ-ն, միակ միջազգային մարդասիրական կազմակերպությունը Լեռնային Ղարաբաղում, լարված աշխատանք տարավ՝ պաշտպանելու և աջակցելու շփման գծի երկայնքով հակամարտության ազդեցությունը կրող բնակչությանը: ԿԽՄԿ-ն հնարավորություն չուներ արձագանքելու այն մարդկանց կարիքներին, որոնք Լեռնային Ղարաբաղից Հայաստան էին եկել՝ ապաստան հայցելու իրենց ընկերների ու հարազատների մոտ:

well as 5-year Action Plan and Core Cost Model, developed based on NS’s Capacity Assessment and Certification exercise.

Presentation and discussion of the NS steps in the area of resource mobilization, including the presentation of market research results, implemented with the support of IFRC, were also included in the agenda.

ARCS Partners actively participated in the discussions of the mentioned issues, presented their views and approaches on the further cooperation.

Partner National Societies emphasized how they appreciate the cooperation with Armenian Red Cross Society and expressed willingness to continue the implementation of joint projects.

## First Movement Contingency Planning process ongoing in Armenia

“The Red Cross / Red Crescent Movement ensures empowerment, capacity and support of the Armenian Red Cross Society for better addressing humanitarian needs of people affected by conflicts and other situations of violence in a timely and coordinated manner.”

This is the goal set by Movement partners gathered on 6 September, in Yerevan, at Armenian Red Cross Society Headquarters, at the Movement Contingency Planning Strategic Meeting, which was followed by 2-day workshop in Thaghkadzor, to start Movement Contingency Planning process. Armenian Red Cross Society (HQ and Regional Branches), together with ICRC, IFRC, and Danish, Austrian, Icelandic, German and Swiss Red Crosses and Iranian Red Crescent high-level representatives attended the event to develop thorough concept and toolbox for a joint response in the event of conflicts affecting Armenia.

Beginning of April 2016, the conflict over Nagorno Karabagh reached a new and unprecedented peek since the end of the war in 1994. This resulted in more than a hundred casualties and several thousand displaced in Nagorno Karabagh. The ICRC, only international humanitarian organization present in Nagorno Karabagh, worked intensely to protect and assist the affected population along the Line of Contact. On ICRC side, there were no capacities available to react to the influx of peo-


Հայկական
Կարմիր
Խաչի
Ընկերություն
ՕԳՆԵՔ
ՄԵԶ
ՕԳՆԵԼՈՒ



ՄԱԿ ՓԳՀ-ի հետ երկարատև համագործացկության համատեքստում, Հայկական Կարմիր խաչի ընկերությունը ակտիվորեն ներգրավված էր տեղահանված անձանց աջակցության գործում՝ իրականացնելով նույնականացում, գրանցման և գնահատման ձևերի մշակում, առավել խոցելի կանանց և երեխաներին հոգեբանական խորհրդատվություն, հատուկ կարիքներով անձանց նույնականացում, ինչպես նաև մասնակցություն ունենալով շահագրիգիռ կողմերի հետ հանդիպումներին: ՀԿԽԸ Մարզային մասնաճյուղերի պատասխանատու անձինք՝ տեղում համակարգել են գործընթացը:

Լարված զինված բախումների ընթացքում և հետո, ՀԿԽԸ-ն և ԿԽՄԿ-ն արձագանքեցին իրենց պատրաստվածության և առկա ռեսուրսների ամբողջ ծավալով, սակայն բոլորն էլ համաձայնեցին, որ արձագանքը Հայաստանում կարող էր ավելի բազմակողմանի լինել և ավելի լավ արտացոլել Շարժման ուժը: Դրա համար էլ, եռակողմ հանդիպման ժամանակ, Կարմիր խաչի ներգրավվածությունն ավելացնելու համար, ՀԿԽԸ-ն, ԿԽՄՖ-ն և ԿԽՄԿ-ն որոշեցին համատեղ, որպես Շարժում նախապատրաստվել հակամարտության հնարավոր վերսկսմանը:

Հաջորդ օրը, այս գաղափարը ներկայացվեց Հայաստանում գործող այլ Ազգային ընկերությունների մասնակցությամբ գործընկերների հանդիպմանը: Գործընկերները ողջունեցին այդ մոտեցումը և պատրաստակամություն հայտնեցին աջակցելու այդ գործընթացին:

Աշխատաժողովին մասնակիցներն աշխատեցին խառը խմբերում՝ գնահատելու Հայաստանում այն հնարավոր կարիքների առաջացումը, եթե վերսկսվի Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը: Նրանք քննարկեցին սցենարներ, գնահատեցին առկա կարողություններն ու բացերը, և մշակեցին արձագանքման առաջին գործողությունները: Աշխատանքային խմբերը հետևյալն էին՝ անվտանգություն, արձագանքում, համակարգում և հաղորդակցում: Միջոցառումն անցավ ջերմ համագործակցության և գործնական մթնոլորտում:

## Շվեյցարական Կարմիր խաչի պատվիրակությունները Հայաստանում

Սեպտեմբերի 26-28-ը և հոկտեմբերի 1-5-ը Շվեյցարական Կարմիր խաչի գլխամասային գրասենյակը կազմակերպեց երկու պատվիրակությունների այցելություն Հայաստան՝ ՇԿԽ Թվայս Քրիստմասի և Շվեյցարական ԶԼՄ ներկայացուցիչների:

Այցելությունների գլխավոր նպատակն էր ծանոթանալ Հայաստանին, առկա խնդիրներին, ՇԿԽ և ՀԿԽԸ-ի գործունեությանը, ինչպես նաև քննարկել հնարավոր համագործակցության ծրագրեր:

Պատվիրակները հանդիպեցին ՀՀ նախարարությունների ներկայացուցիչների, Շիրակի և Լոռու մարզպետներին, ՀԿԽԸ ղեկավարությանը և շահառուներին Երևանում և մարզերում:

ԶԼՄ-ների ներկայացուցիչները հեռուստանկարահանումներ և ռադիոծրագրերի համար ձայնագրություններ կատարեցին:

ple who left Nagorno Karabagh to seek refuge with friends and relatives in Armenia.

Armenian Red Cross Society, in the context of long-term cooperation with UNHCR was actively engaged in supporting displaced persons by identification, development of registration and assessment forms, conducting registration and assessment, providing psychological consultation to the most vulnerable women and children, identification of persons with specific needs, participating in cooperation meetings with stakeholders. ARCS focal points at Regional Branches coordinated the process on the site.

During and after the intense hostilities, ARCS and ICRC responded as good as their preparedness measures and resources allowed, but all agreed that the response in Armenia could have been more comprehensive and better reflected the strength of the Movement. Therefore, in a tripartite-meeting afterwards, with the objective to improve the Red Cross engagement, the ARCS, the International Federation of Red Cross and Red Crescent Societies (IFRC) and the ICRC decided to get prepared for a possible resumption of the conflict by acting jointly – as a Movement.

The following day, this new approach was shared during a partnership meeting with ARCS partner National Societies. The parteners welcomed the approach and express readiness to support the process.

Participants worked in mixed teams to assess the potential needs that would arise in Armenia, in case of a resumption of the Nagorno Karabagh conflict. They discussed scenarios, assessed existing capacities and gaps, and came up with first-response activities. The working groups involved discussions on security, response, coordination and communication. The event took place in an atmosphere of cordial partnership and pragmatism.

## Swiss Red Cross delegations in Armenia

On 26-28 September and 1-5 November Swiss Red Cross Headquarters organize a visit of two Delegations to Armenia: SRC Twice Christmas and representatives of Swiss Mass Media.




## Եվրոպական կամավորական ծառայություն

Հայկական Կարմիր խաչի ընկերությունն (ՀԿԽԸ) իր գործունեության ընթացքում մշտապես համագործակցում է Կարմիր խաչի և Կարմիր մահիկի (ԿԽ և ԿՄ) միջազգային շարժման բոլոր բաղկացուցիչների, կառավարությունների, միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների հետ:

The visits aimed at gaining knowledge on Armenia, existing problems, SRC and ARCS activities, as well as discussing new possible cooperation projects.

The delegates met with RA ministries representatives, Governors of Shirak and Lori Regions, ARCS leadership and beneficiaries in Yerevan and Regions.

ԵԿԽ կամավորները մասնակցել են բազմաթիվ միջազագային հանդիպումների, համաժողովների, դասընթացների, ինչպես նաև հաճախ հրավիրվել են որպես դասընթացավարներ:

Միջազգային համագործակցության շրջանակներում Բրիտանական Կարմիր խաչի հետ համագործակցությամբ` 2016թ. ՀԿԽԸ 4 երիտասարդ կամավորներ գործունեություն են ծավալել Բրիտանական ԿԽ սոցիալական ծրագրերում` Մեծ Բրիտանիայի տարբեր քաղաքներում: Հայկական Կարմիր խաչի ընկերությունը, Գերմանական Կարմիր խաչի հետ համատեղ` Հայաստանում 10 օրով հյուրընկալեց 10 կամավորներից բաղկացած Գերմանական ԿԽ երիտասարդ պատվիրակությանը: Արդեն ավանդույթ դարձած այս կարճաժամկետ փոխայցերը նպատակ ունեն նպաստելու Ազգային ընկերությունների միջև փորձի փոխանակմանը: Գերմանացի և հայ կամավորները մասնակցեցին երիտասարդական ծրագրերի շրջանակներում իրականացվող միջոցառումներին, այցելեցին տեսարժան վայրեր և ծանոթացան միմյանց մշակույթին: Այս տարվա այցի օրակարգը կառուցվել էր առողջ ապրելակերպին վերաբերվող խնդիրների շուրջ:

## Գերմանացի կամավորները Հայկական Կարմիր խաչում

Գերմանական կարմիր խաչի և Հայկական Կարմիր խաչի ընկերության միջև երիտասարդ կամավորների արդեն ավանդույթ դարձած ամենամյա փոխայցը տեղի ունեցավ օգոստոսի 13-22-ին: Երիտասարդական Կարմիր խաչը ինն օրով հյուրընկալեց 8 կամավորներից և 1 լիդերից բաղկացած Գերմանական ԵԿԽ պատվիրակությանը:

Կարճաժամկետ փոխայցը հնարավորություն տվեց Ազգային ընկերությունների մասնակիցների միջև փորձի փոխանակմանը: Այս տարվա փոխայցի թեման էր «Առաքելությունն է` ապրել առողջ»: Գերմանացի և հայ կամավորները մասնակցեցին ծրագրի շրջանակներում կազմակերպված բազմաբնույթ միջմշակութային դասընթացներին և միջոցառումներին, ինչպես նաև այցելեցին տեսարժան վայրեր: Գերմանացի կամավորները փոխայցի 1 օրը հյուրընկալվեցին հայ կամավորների` իրենց նոր ընկերների ընտանիքներում: Հյուրընկալող ընտանիքներում անցկացրած ժամանակը էլ ավելի մտերմացրեց ծրագրի մասնակիցներին:

